



Լուսինե Գրիգորյան
Վիգեն Շիրվանյան

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

- Միջազգային փորձը
- Իրավիճակը Հայաստանում
- Անհրաժեշտ փոփոխությունները

Երևան - 2021թ.



Հետազոտությունն իրականացվել է Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

Այս հետազոտությունում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հեղինակներ՝

Լուսինե Գրիգորյան
Վիգեն Շիրվանյան

Պատկերագրողներ՝

Լուսինե Ղանդիլյանի

Էջադրումը՝

Ծովինար Խաչատրյանի

:

Մեդիագրագիտություն, ինֆորմացիոն գրագիտություն, համակարգչային կամ թվային գրագիտություն, թվային քաղաքացիություն... Ձևակերպումներն ու մոտեցումները տարբեր են, բայց գիտակցումը, որ մեդիայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների դարում քաղաքացուն պետք է ինֆորմացիոն միջավայրում կողմնորոշվելու, թվային աշխարհը հասկանալու, ժամանակակից մեդիա գործիքներից արդյունավետ և ապահով օգտվելու հմտություններ ու գիտելիք, ամրագրված է միջազգային հետազոտություններում, ուղեցույցներում, շատ երկրների կրթական ծրագրերում: Եվ քանի որ մեդիայից (այդ թվում, նոր՝ թվային մեդիայից) օգտվողների տարիքային շերտ գնալով իջնում է, շատ մասնագետների կարծիքով մեդիագրագիտության հիմքերը պետք է դնել հենց այն տարիքից, երբ երեխան սկսում է օգտվել մեդիայից՝ փոքր քայլերով, տարիքին համապատասխան մեթոդներով:

Հատկապես կորոնավիրուսային համավարակը մեծացրեց ուշադրությունը թեմայի նկատմամբ. մեդիա գործիքները դարձան կրթության ու աշխատանքի, ամենօրյա հաղորդակցության կարևոր ու մեծ բաղադրիչ, դպրոցներն ամբողջ աշխարհում ստիպված էին ինտեգրել թվային տեխնոլոգիաները ամենօրյա կրթության մեջ: Մյուս կողմից՝ համավարակով պայմանավորված այդ իրավիճակը իր հետ բերեց կեղծ տեղեկությունների, սենսացիոն ու մանիպուլացիոն նյութերի մեծ ալիք, որ մինչև իսկ վտանգավոր դարձավ մարդկանց առողջության համար. այս համատեքստում շեշտվեց մեդիան հասկանալու հմտությունների կարևորությունը:

Փոքր երեխաների դեպքում խնդիրն ավելի սուր է. կարանտինի շրջանում տանից աշխատող ծնողները սկսեցին երեխաներին ավելի շատ թույլ տալ օգտվել էկրաններից՝ նրանց զբաղեցնելու համար: Երեխաները հաճախ են մենակ մնում էկրանի առջև՝ միայնակ նավարկելով ՅուՏյուբում և այլ հարթակներում, երբեմն նրանք սպառում են բովանդակություն, որը չեն ընկալում, խաղում են էլեկտրոնային խաղեր, որոնք նախատեսված չեն նախադպրոցական տարիքի համար, կարող են ռիսկեր պարունակել: Երկար էկրանի առջև մնալը նաև ֆիզիկական առողջության ու հոգեբանության վրա կարող է ազդել, շփման ու խոսքի հապաղման հանգեցնել վաղ տարիքում: Մյուս կողմից, շատ մասնագետների կարծիքով, տեխնոլոգիայի նպատակային կիրառությունը երեխայի զարգացման համար կարող է նոր հնարավորություններ ստեղծել:

Թե հատկապես որ տարիքից է խրախուսելի թվային մեդիա գործիքների կիրառումը և արդյոք պետք է դա դարձնել վաղ զարգացման ու կրթության մաս, վիճելի թեմա է աշխարհում: Արևմտյան առաջատար երկրներից շատերի պետական չափորոշիչներում ու կրթական քաղաքականության փաստաթղթերում ամրագրված է մեդիագրագիտության դասավանդման կարևորությունը սկսած նախադպրոցական տարիքից: Տեխնոլոգիայի կիրառումից առավել կարևորվում է երեխայի մտածելու, ստեղծագործելու, համագործակցելու, հարցեր տալու կարողությունների զարգացումը վաղ տարիքում, որը հետագա մեդիակրթության հիմքն է:

Հայաստանում Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշիչների մշակումը դեռ ընթացքի մեջ է. առաջարկվող տարբերակում ամրագրվում է Մեդիա և թվային կարողունակությունը, ինչպես որ 2021թ. փետրվարին հաստատված Հանրա-



կրթության պետական չափորոշչում է:

Առայժմ նախադպրոցական կրթության ոլորտում գործում են 2011 թ-ին մշակված և 2018 թ-ին վերանայված «Օնևդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները»՝ սա ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնությամբ մշակված փաստաթուղթ է՝ հիմնված Հայաստանում արված հետազոտության, փորձարկված մեթոդների ու մոտեցումների վրա: Գործող չափորոշչում չկա մեդիագրագիտությունն ձևակերպումը, բայց առկա է տեխնոլոգիա բաղադրիչը, ինչպես նաև այլ հմտություններ, որոնք նպաստում են երեխայի ստեղծագործական ու քննադատական մտքի, հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Հայաստանում մեդիագրագիտությունն ընդհանուր առմամբ համակարգված չի ուսուցանվում. չկա մեդիագրագիտության ազգային հայեցակարգ, պետական կրթական ծրագրերում այն առայժմ ներառված չէ, և որ շատ կարևոր է՝ մանկավարժների վերապատրաստման մեծ բաց գոյություն ունի: Ավելին, չկան հանրության, այդ թվում երեխաների, մեդիայի սպառման, ընկալման, նախասիրությունների և կարիքների վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ:

Մինչ այժմ մեդիագրագիտության տարածմամբ Հայաստանում հիմնականում զբաղվել են ոլորտի հասարակական կազմակերպությունները: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (նախկին Ինտերնյուս ՀԿ) 2013 թվականին պատրաստել է «Մեդիագրագիտություն» ուսուցչի ձեռնարկը, որը երաշխավորվել է ԿԳՄՄՆ կողմից, և որի հիման վրա իրականացվել են բազմաթիվ վերապատրաստումներ և դասընթացներ (Ինտերնյուս, 2013): Կան մեդիագրագիտության խմբակներ (մարզային Ինֆոտներում, Հայաստանի մանուկներ հիմնադրամի կրթական կենտրոններում, Վորլդ Վիժնի մարզային կենտրոններում), բանավիճային ակումբներ, նաև դպրոցական ծրագրեր ու խմբակներ՝ մեծավ մասամբ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի նյութերով և ուղղորդմամբ գործող:

Ինֆորմացիոն և համակարգչային գրագիտության ու անվտանգության կրթական ծրագրեր է իրականացնում Մեդիակրթության կենտրոնը, որ առավել հայտնի է «Ապահով համացանց» դպրոցական ծրագրով:

Նախադպրոցական կրթության մեջ մեդիագրագիտության ներդրման ուղղությամբ որոշակի քայլեր արել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետը. այստեղ կան մեդիակրթության դասընթացներ ուսանողների համար, մշակվել են ձեռնարկներ, արվել են դաշտում աշխատող մասնագետների համար վերապատրաստումներ: 2020թ-ին նախադպրոցական կրթության մասնագետներին աջակցելու ծրագրեր է սկսել նաև Հանրային լրագրության ակումբը. այդ նախաձեռնության մաս է նաև սույն ուսումնասիրությունը:

Բիարկե, լայն առումով մեդիակրթության մաս են նաև ստեղծագործական, լրագրողական խմբակները, որ երկար պատմություն ունեն մեր երկրում, երեխաների մասնակցությամբ, երեխաների համար ստեղծվող հաղորդումները, նաև ռոբոտաշինության ու ծրագրավորման ակումբները, որ խթանում են ինֆորմացիոն գրագիտությունը:

Սակայն մեդիագրագիտության ընդունված և այս հետազոտության մեջ կիրառված ընկալումը միավորում է մեդիան գրագետ օգտագործելու և սպառելու, քննադատորեն վերլուծելու, դրա միջոցով ստեղծագործելու և արդյունավետորեն հաղորդակցվելու



հմտությունները: Իսկ մեդիակրթությունը այս գրագիտությունը ձևավորելուն ուղղված կրթությունն է:

Այս ուսումնասիրության նպատակն է նպաստել երեխաների մեդիագրագիտության կարողությունների ու դրանց ձևավորման միջավայրի բարելավմանը՝ նախադպրոցական կրթության մեջ անհրաժեշտ փոփոխություններ առաջարկելով: Այս ուսումնասիրության ուշադրության կենտրոնում հատկապես 4-6 տարեկան երեխաների կարիքները և նրանց համար նախատեսված ծրագրերն են:

Հետազոտության հիմնական խնդիրն է մշակել առաջարկներ Հայաստանում նախադպրոցական կրթության մեջ անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ:

Ենթախնդիրներն են՝

- բացահայտել չափորոշային, ծրագրային բացերը,
- ուսումնասիրել ՆՈՒՀ-երի և մասնագետների պատրաստվածությունը,
- ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը,
- մասնագետների և ուսուցանողների օգնությամբ վեր հանել առաջնահերթությունները,
- կազմել առաջարկներ քաղաքականություն մշակողների և իրականացնողների, ինչպես նաև ՆՈՒՀ մանկավարժների համար:

Հետազոտությունն իրականացվել է 2020-21թթ. դեկտեմբերի 15-ից մարտ 15-ի ընթացքում: Հետազոտության հիմքում ոլորտը կարգավորող փաստաթղթերի ու միջազգային փորձի ուսումնասիրությունն է, ինչպես նաև մասնագետների հետ խորքային հարցույցները, ֆոկլուս խմբային քննարկումները, նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՆՈՒՀ) մանկավարժների շրջանում արված առցանց հարցումը:

Երեխաների մեդիասպառման առանձնահատկությունները, ռիսկերն ու հնարավորությունները ուսումնասիրվել են արդեն հասանելի միջազգային հետազոտությունների հիման վրա: Մեդիագրագիտությունը խթանող միջազգային կառույցների հետազոտական փաստաթղթերի և ուղեցույցների, ինչպես նաև առանձին մի քանի երկրների օրինակով հետազոտվել է մեդիակրթության լավագույն փորձը՝ նախադպրոցական հաստատություններում:

Հայաստանյան իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար ուսումնասիրվել են գործող չափորոշիչները, նախադպրոցական պետական կրթական ծրագրերը, այլընտրանքային ծրագրեր և ուղեցույցներ, հետազոտություններ. անդրադարձ է արվել նաև մարտի 10-ին շրջանառության մեջ դրված Նախադպրոցական կրթության նոր չափորոշիչի նախագծին:

Խորքային հարցազրույցներ են անցկացվել քաղաքականություն մշակող և իրականացնող մարմինների ներկայացուցիչների, պետական և մասնավոր նախադպրոցական հաստատությունների տնօրեն/փոխտնօրենների, մանկավարժների, բուհական մասնագետների, կրթության ու մեդիայի փորձագետների, հոգեբանների հետ:

ՆՈՒՀ մանկավարժների լայն շրջանակից տվյալներ հավաքագրելու համար կիրառվել է առցանց հարցման մեթոդը. դրա արդյունքում ստացվեց 156 դասավանդողի արձագանք: Դրա հիման վրա լրացուցիչ ֆոկլուս խմբային քննարկում է անցկացվել հետաքրքրված 11 ՆՈՒՀ մանկավարժների հետ՝ տեխնոլոգիայի կիրառության պրակտիկական հասկանալու համար:

Տեղական պատկերը համադրելով միջազգային փորձի հետ արվել են նախնական եզրակացություններ և առաջարկներ, որոնք քննարկվել և լրամշակվել են մասնագետների հետ անցկացված առցանց քննարկման ընթացքում:

Համաճարակային իրավիճակով պայմանավորված հանդիպումների գերակշիռ մասն անցկացվել է առցանց՝ տեսակապի միջոցով, միջազգային մասնագետներից մի քանիսի հետ՝ նաև գրավոր նամակագրությամբ: Սակայն մանկապարտեզների վերաբացվելու հետ մեկտեղ հնարավորություն եղավ այցելելու դրանցից մի քանիսը և տեղում ծանոթանալու փորձին:

Այս ամենի արդյունքում գծագրվել են ամփոփիչ եզրակացություններն ու առաջարկները, որոնք կներկայացվեն ոլորտի քաղաքականություն մշակողներին և մանկավարժներին:

**ԹՎԱՅԻՆ, ԹԵ՞ ՄԵԴԻԱ ԳԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Միջազգային մասնագիտական հանրությունը և ոլորտով մտահոգ կառույցները տարբեր ձևակերպումներ են տալիս, բայց ըստ էության, բոլորը նկատի ունեն նման կարողությունների շրջանակ, որ անհրաժեշտ է ժամանակակից մարդուն թվայնացվող և տեղեկատվությամբ հարուստ աշխարհում ապրելու համար:

Միջազգային կառույցներից մեդիա, ինֆորմացիոն և թվային գրագիտության առաջխաղացմամբ ակտիվորեն զբաղվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ԵՄ-ն, Եվրախորհուրդը, Հեռահաղորդակցության միջազգային միությունը (International telecommunication union): Դրան զուգահեռ թվային գրագիտության օրակարգ ունեն նաև դաշտի խոշոր ընկերությունները, որոնք հետապնդում են նաև կոմերցիոն շահեր: Եվ հաճախ նրանց ներկայացրած մոտեցումներն ավելի մեծ ընդունելություն են ունենում տարբեր երկրների կառավարությունների կողմից, սակայն մասնագետների կողմից քննադատվում են՝ ոչ թե կրթական, այլ բիզնես նպատակների համար (UNICEF, 2019):

Մեդիագրագիտության ավանդական սահմանումը ենթադրում էր մի քանի կարողություն՝ կարողանալ գտնել տեղեկությունը, վերլուծել և գնահատել այն, ստեղծել և տարածել տեղեկություն (Ինտենյուս, 2013): Այս մոտեցումը ի սկզբանե որպես հիմք ընդունած ՅՈՒՆԵՍԿՕ-ն այսօր միավորել է մեդիա և ինֆորմացիոն գրագիտությունները՝ համարելով, որ դրանք փոխկապակցված են և պիտի դասավանդվեն համատեղ: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ուսուցիչների ձեռնարկի՝ մեդիա և ինֆորմացիոն գրագիտության հմտությունների շրջանակը հետևյալն է.

Ինֆորմացիոն գրագիտություն

Ձևակերպել ինֆորմացիոն կարիքները, գտնել և հասանելիություն ունենալ տեղեկությանը, գնահատել տեղեկությունը, կազմակերպել տեղեկությունը, էթիկապես կիրառել այն, փոխանցել տեղեկությունը, կիրառել SS հմտություններ՝ տեղեկատվության մշակման համար:

Մեդիագրագիտություն

Հասկանալ մեդիայի դերն ու գործառույթները ժողովրդավարական հասարակություններում, հասկանալ պայմանները, որոնց դեպքում մեդիան կարող է կատարել իր գործառույթները, քննադատորեն գնահատել մեդիայի բովանդակությունը՝ դրա գործառույթների լույսի ներքո, կիրառել մեդիան ինքնարտահայտման և ժողովրդավարական մասնակցության համար, ունենալ հմտություններ բովանդակություն ստեղծելու համար (UNESCO, 2011):

Մեկ այլ շատ ընդունված մոդել է ԵՄ-ի DigComp 2.0-ը՝ Քաղաքացիների թվային կարողունակությունների շրջանակը, որը հիմք է դարձել տասնյակ եվրոպական երկրների քաղաքականությունների համար: Այս շրջանակը առանձնացնում է հինգ հիմնական ոլորտ, որոնց ուղղությամբ պետք է զարգացնել հմտությունները .

Ինֆորմացիոն և տվյալների գրագիտություն (գտնել և կիրառել թվային տեղեկություններ և տվյալներ, գնահատել աղբյուրը, վերլուծել տեղեկությունները, պահպանել և կառավարել թվային տվյալները):



Հաղորդակցություն և համագործակցություն (թվային տեխնոլոգիաների միջոցով շփվել և համագործակցել, մասնակցել հանրային, քաղաքացիական կյանքին, կառավարել սեփական թվային ինքնությունն ու հեղինակությունը)

Թվային բովանդակության ստեղծում (ստեղծել և մշակել թվային բովանդակություն, առկա գիտելիքին ավելացնել տեղեկություն և բովանդակություն՝ հասկանալով հեղինակային իրավունքը, կարողանալ համակարգչային սիստեմներին տալ հասկանալի հրահանգներ):

Անվտանգություն (պաշտպանել կրիչները, բովանդակությունը, անձնական տվյալները և գաղտնիությունը թվային միջավայրում: Պաշտպանել ֆիզիկական և հոգեկան առողջությունը, տեղյակ լինել թվային տեխնոլոգիաների էկոլոգիական ազդեցության մասին)

Խնդիրների լուծում (Տարբերակել կարիքներն ու խնդիրները, լուծել հայեցակարգային խնդիրներն ու իրավիճակները թվային միջավայրում, թվային գործիքների միջոցով բարելավել գործընթացներն ու ապրանքները, գնալ թվային էվոյուցիային համընթաց) (EU, 2020):

ՅՈՒՆԻՍԵՖ-ի համոզմամբ ԵՄ Եվրոպական հանձնաժողովի առաջարկած DigComp թվային կարողունակությունների հենց այս շրջանակը պետք է կիրառել երեխաների համար՝ տեղայնացնելով և մշակելով տեղի մշակույթից բխող ուղեցույցներ:

[ՅՈՒՆԻՍԵՖ-ն օգտագործում է թվային գրագիտություն և եզրույթը.](#)

«Թվային գրագիտությունը վերաբերում է այն գիտելիքին, հմտություններին և մոտեցումներին, որոնք թույլ են տալիս երեխաներին զարգանալ և ծաղկել ավելի ու ավելի գլոբալացող թվային աշխարհում՝ լինելով ապահով, մինչև ժամանակ զինված հմտություններով՝ իրենց տարիքին, տեղի մշակույթին ու միջավայրին համապատասխան» (UNICEF, 2019):

Եվրոպական խորհրդարանը, օգտագործելով թվային կարողունակություն հասկացությունը, այն ձևակերպում է այսպես.

«Թվային կարողունակությունը ենթադրում է թվային տեխնոլոգիաների վստահ, քննադատական, պատասխանատու կիրառություն՝ կրթության, աշխատանքի և հանրային մասնակցության համար: Այն ներառում է ինֆորմացիայի և տվյալների գրագիտություն, մեդիագրագիտություն, հաղորդակցություն և համագործակցություն, թվային բովանդակության ստեղծում (այդ թվում՝ ծրագրավորում), ապահովություն (այդ թվում՝ բարեկեցություն և կիրքերանվտանգություն), մտավոր սեփականության հարցեր, խնդիրների լուծում և քննադատական մտածողություն» (EC, 2018):

Եվրոպայի խորհուրդը օգտագործում է թվային քաղաքացիություն ձևակերպումը.

«Թվային քաղաքացին, զարգացնելով կարողություննակությունների լայն շրջանակ, կարողանում է ակտիվորեն, պատասխանատու կերպով և դրական մոտեցմամբ մասնակցել օֆլայն և օնլայն համայնքների կյանքին՝ լոկալ, ազգային կամ գլոբալ: Քանի որ թվային տեխնոլոգիաները փոփոխվող են, կարողությունների զարգացումը նույնպես շարունակական է՝ սկսած վաղ մանկությունից, տանը և դպրոցում, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրերում: Թվային քաղաքացիությունը ներառում է գործողությունների մեծ շրջանակ՝ ստեղծել, սպառել, տարածել, խաղալ, սոցիալիզացվել, հետազոտել, հաղորդակցվել, սովորել և աշխատել» (CoE, 2019):

Կրթության ուսումնասիրությամբ զբաղվող ամերիկյան Էրիկսոն ինստիտուտն



առաջարկում է մեդիագրագիտության դասական ձևակերպման իրենց տարբերակը՝ հարմարեցված փոքր երեխաների կարիքներին:

Վաղ մանկության տարիքում մեդիագրագիտությունը հետևյալ զարգացող կարողությունների ամբողջությունն է.

- Երեխան ունի հասանելիություն և կարողանում է օգտվել իր տարիքին համապատասխան մեդիայից,
- Կարողանում է մեդիայի միջոցով ուսուսմասնաիրություն և բացահայտումներ անել,
- Քննադատական հարցադրումներ է անում,
- Գնահատում է մեդիան,
- Ստեղծագործում է մեդիայի միջոցով (Herdzina, Lauricella, 2020):

Ընդհանուր առմամբ, եթե տարիներ առաջ թվային գրագիտություն ձևակերպումը վերաբերում էր թվային գործիքների վարժ և գրագետ կիրառությանը, ապա այսօր այն ամբողջացնում է թվայնացվող աշխարհում ապրելու կարողությունների և հմտությունների ամբողջությունը. այս հասկացության ընդգրկումը լայնանում է: Երեխաների դեպքում՝ մեդիա և թվային գրագիտության հիմքում նրանց բարեկեցությունն ու իրավունքներն են, և կարևորվում է երեխաների ակտիվ մասնակցության խթանումը՝ պասիվ սպառման փոխարեն (Byrne et al. 2016):

Նաև փոխվում է ընդհանուր մոտեցումը. եթե նախկինում մասնագետները հիմնականում մտահոգ էին թվային վտանգներից երեխաներին պաշտպանելու խնդրով, հիմա թվային գրագիտության առաջնային խնդիրը երեխաներին հզորացնելն ու թվային հնարավորություններից օգտվելու հմտություններով զինելն է՝ ապահով միջավայրում:

Իսկ մեդիագրագիտություն ասելով հասկանում ենք ոչ միայն թվային, այլ նաև տպագիր ու անալոգ մեդիան, այն ամենը, ինչը ձևավորում է երեխայի տեղեկատվական միջավայրը:

«Մեդիագրագիտություն նշանակում է երեխաներին զինել թվային միջավայրում մտածող և ստեղծող լինելու կարողություններով: Դա չի նշանակում հրաժարվել գրքերից, գիրքը նույնպես մեդիա է, և մարդը չի կարող մեդիագրագետ լինել, եթե տպագիր մեդիան չի հասկանում», - գրում է Ֆեյթ Ռոգոուն, ԱՄՆ-ում երեխաների մեդիագրագիտության հիմնադիրներից մեկը (Rogow, 2015):

Այս հետազոտության մեջ հեղինակները կօգտագործեն մեդիագրագիտություն, մեդիակրթություն ձևակերպումները, դրանց ներքո հասկանալով նաև թվային գրագիտությունը, քանի որ Հայաստանում հենց մեդիագրագիտություն եզրույթն է առավել կիրառվող ու ճանաչելի: Մեդիան ևս հետազոտության մեջ կիրառվում է լայն իմաստով. մեդիան ոչ միայն լրատվամիջոցներն են, այլ տեղեկություն և ուղերձներ փոխանցող թվային ու ոչ թվային գործիքները և բովանդակությունը (գիրքը, ֆիլմը, թատրոնը, գովազդային վահանակը, հեռախոսն ու դրանով փոխանցվող հաղորդագրությունները, խաղերը...): Ուսուսմասնաիրության հեղինակների ընկալումը մոտ է Ֆինլանդիայի Մեդիակրթության ազգային ռազմավարության ձևակերպմանը.

«Մեդիագրագիտությունը մեդիան օգտագործելու և սպառելու, ինչպես նաև հասկանալու, ստեղծելու հմտությունների ամբողջությունն է: Իսկ մեդիակրթությունը մեդիագրագիտությունը խթանելու կրթական գործընթացն է»:

Երեխաների ու մեդիայի վերաբերյալ ուսուսմասնաիրությունները մի քանի հիմնա-

կան ուղղություն ունեն.

Ա. մեդիա ստեղծող կորպորացիաների կառուցվածքը, ֆինանսավորումը, դրանց կառավարումն ու վերահսկողությունը, այդ ընկերությունների քաղաքական ու տնտեսական շահերը,

Բ. մեդիա բովանդակությունը, դրա տարածած կարծրատիպերը, աշխարհընկալման ելակետերը, գաղափարաբանությունը, հասարակական հարաբերությունների մոդելները,

Գ. տեխնոլոգիան որպես կյանքի բաղկացուցիչ մաս, դրա ազդեցությունը մարդկային հարաբերությունների, կենցաղի, ընտանեկան հարաբերությունների, մտածողության, կրթության, աշխատանքի ու ժամանցի վրա,

Դ. ինչպես, որտեղ, ինչու են երեխաները օգտվում տեխնոլոգիայից ու մեդիայից, երեխաների մեդիա նախընտրությունները, մեդիայի նրանց ընկալումը (Lemish, 2019):

Քանի որ երեխաների գիտակցական, զգայական, սոցիալական ու ֆիզիկական դաշտը լիովին ձևավորված չէ, նրանք ավելի խոցելի են մեդիայի ազդեցության առումով:

Մինչև 3 տարեկանների վերաբերյալ ուսումնասիրությունները կենտրոնանում են հատկապես երեխայի մտածողության, խոսքի, իմացական կարողությունների զարգացման վրա, իսկ 4-5 տարեկանում՝ ինչպես են ընկալում և կառուցում պատմությունը, ինչպես է դրսևորվում երեխայի վարքը:

Ավելի մեծ տարիքում հետազոտություններն ուսումնասիրում են, թե ինչ տեղ ունեն ժամանցն ու կրթությունը երեխաների մեդիայի կիրառության մեջ, քննում են պատանիների հակասոցիալական վարքագիծը, այդ թվում՝ թվային հարթակներում նրանց փորձարկումները:

Մեծ թեմա է նաև մեդիայում բռնության և սեռական բնույթի բովանդակությունը, որը հասանելի է դառնում երեխաներին, և դրա հնարավոր ազդեցությունը երեխայի հետագա վարքի, այդ թվում սեռական վարքի ու հետաքրքրությունների վրա:

Գովազդի ազդեցությունը երեխայի վրա նույնպես կարևոր խնդիր է, քանի որ երեխաները լավ չեն հասկանում համոզելու տեխնոլոգիաների կիրառությունը, ավելի զգայուն են, գովազդը ազդում է երեխաների ինքնագնահատականի, սեփական արտաքինի ընկալման վրա, դառնում սննդային խանգարումների և ընտանեկան կոնֆլիկտների պատճառ (Lemish, 2019):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միայն 6 և բարձր տարիքի երեխաներն են կարողանում գովազդը տարբերել մեդիայի այլ տեսակներից: Մա հաշվի առնելով է, որ որոշ երկրներում (Նորվեգիա, Շվեդիա) 12-ից ցածր երեխաների համար նախատեսված ծրագրերում գովազդ չի թույլատրվում: Առցանց միջավայրում ևս տարբեր միջոցներով գովազդը թիրախավորում է երեխաներին, և ծնողներին խորհուրդ է տրվում ավելի ուշադիր լինել՝ երեխաների համար բովանդակություն ընտրելիս, նաև խրախուսել նրանց քննադատական մտածողությունը վաղ տարիքից (Peters & Blumberg, 2002):

Շատ երեխաներ սկսում են կիրառել թվային սարքեր կամ մեդիա գործիքներ անգամ մինչև քայլել կամ խոսել սովորելը: Ամերիկյան Common Sense կազմակերպության 2020 թվականի Project Zero, 0-8 National Census համազգային հարցման տվյալ-



ներով մինչև 2 տարեկանները օրական մոտ 49 րոպե են անցկացնում էկրանի առաջ, 2-4 տարեկանները՝ 2:30 ժամ, 5-8 տարեկանները՝ ավելի քան 3 ժամ:

Եվրոպական երկրներում 0-8 տարեկան երեխաների թվային վարքը ուսումնասիրող հետազոտությունն իրականացվել է 21 երկրներում, որտեղ ընտանիքների հետ արվել է 234 հարցազրույց (Chaudron et al, 2018): Պարզվել է, որ եվրոպացի երեխաները հիմնականում տեսանյութեր են դիտում Յություբում, նաև խաղեր են ներբեռնում և խաղում (Chaudron et al, 2018): Անգամ մինչև 2 տարեկան երեխան իր ծնողների միջոցով ունի թվային ներկայություն և հետք, և երեխաների թվային վարքագիծը կրկնում է նրանց ծնողների վարքը:

ԱՄՆ մանկաբույժների ակադեմիան եզրակացություններ ու խորհուրդներ է հրապարակում երեխաների մեդիա սպառման վերաբերյալ: 2016 թվականի զեկույցում ասում է, որ մինչև 2 տարեկան երեխան մեծահասակի հետ անմիջական շփման խիստ կարիք ունի և էկրանների դրական ազդեցությունը ապացուցված չէ:

3-5 տարեկան հասակում մեծահասակի օգնությամբ երեխայի տարիքին համապատասխան հավելվածների կիրառումն ու ֆիլմերի դիտումը օգնում է երեխային, սակայն ակադեմիան զգուշացնում է նաև երեխայի առողջության, քնի վրա հնարավոր ազդեցության ու վսասների մասին, եթե երեխան երկար է փսում էկրանի առաջ և սպառում է իր տարիքին ոչ համապատասխան բովանդակություն: Շեշտվում է նաև մեդիան ստեղծագործական և խաղային միջավայրում կիրառելու կարևորությունը (Pediatrics, 2016):

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խորհուրդ է տալիս հնարավորինս քիչ ժամանակ անցկացնել էկրանի առջև, փոխարենը խրախուսել ֆիզիկական ակտիվությունն ու խաղը: Մինչև հինգ տարեկանների համար կազմակերպությունը խորհուրդ է տալիս էկրանային ժամանակը սահմանափակել օրական մինչև 60 րոպե (WHO, 2019):

Վաղ տարիքում թվային մեդիայի կիրառության մասին հայաստանյան հետազոտություններ չկան, որոնց հիման վրա կարելի է պատկերացնել խնդիրներն ու կարիքները: 2018-ին ՅՈՒՆԻՍԵՖԻ հրատարակած «Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման եվ կրթական չափորոշիչներ»-ում շեշտվում է մասնագետների մտահոգությունը «վաղ տարիքի երեխաների կողմից տեխնոլոգիաների անվերահսկելի օգտագործման» վերաբերյալ. այդ մտահոգությունը և փորձագիտական կարծիքը, որ Հայաստանում երեխաների մեդիա սպառումը կարգավորելու կարիք կա, առկա է նաև այլ փաստաթղթերում, արձանագվում է նաև բանավոր քննարկումներում:

2020 թվականին Եվրախորհրդի անցկացրած Թվային քաղաքացիության կրթության վերաբերյալ ուսումնասիրությունը ներառել է նաև Հայաստանը: Հետազոտությունն արվել է կորոնավիրուսի համավարակի պայմաններում թվային գործիքների կիրառությունն ու դերը հասականալու համար, մասնակցել են 46 երկրների ծնողներ, հիմնականում՝ մայրեր: Հայաստանից մասնակցել է 1397 ծնող (Richardson, 2020): Ուսումնասիրության մեջ նախադպրոցական տարիքի երեխաները առանձնացված չեն. երեխաների տարիքային հիմնական խումբը 5-13 տարեկանն է:

Հարցման տվյալներով հայ ծնողները մյուսներից ավելի շատ են երեխաների հետ խաղում սեղանի խաղեր: Նրանք պնդում են, որ տեղյակ են երեխաների օֆլայն և օնլայն



ակտիվության մասին ու ակտիվորեն աջացվում են իրենց երեխաներին (մոտ 60%): Հայաստանցի ծնողների մոտ 50%-ը համացանցի ամենամեծ խնդիրը համարում է կեղծ տեղեկություններից խուսափելը, հետո միայն անձնական տվյալների գաղտնիությունը: Նրանց կեսից ավելին երեխաների հետ օնլայն տիրություն ժամանակ է անցկացնում օգնելու տնային առաջադրանքների և կրթության հարցերում, իսկ 40%-ից ավելին երեխաների հետ միասին երաժշտություն է լսում ու տեսանյութեր դիտում: Ծնողների 50%-ից ավելին նաև վստահ է, որ երեխաները իրենց տեղեկացնում են համացանցում խնդիրների հանդիպելիս (Richardson, 2020):

Սակայն հայկական ընտանիքներում, այլ երկրների համեմատությամբ, քիչ են գործում համացանցից օգտվելու կանոններ. եթե օրինակ Խորվաթիայում ու Լեհաստանում ծնողների 60%-ից ավելին է նշել, որ երեխաները որպես կանոն պիտի թույլտվություն հարցնեն անձնական տվյալներ տարածելուց առաջ, հայաստանցի ծնողների միայն 38%-ն է այս կանոնը կիրառում: Իսկ օնլայն ինֆորմացիան քննադատորեն վերլուծելու կանոնը հայ ծնողների միայն 8%-ն է նշել, որն ամենացածր ցուցանիշն է հարցմանը մասնակցած 8 հիմնական երկրների շարքում (Հայաստան, Խորվաթիա, Լեհաստան, Մալթա, Հունաստան, Իռլանդիա, Իսլանդիա, Մոնակո, Իսպանիա):

Բոլոր երկրների ծնողների համար խնդիրներից առաջնայինը երեխաների համացանցի կիրառությունը սահմանափակել/բալանսավորելն է, ապա անվտանգությունը ապահովելը, հետո՝ բացասական բովանդակությունից պաշտպանելը. այս թեմաներով ծնողները նշել են, որ օգնության կարիք ունեն (Richardson, 2020):

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթության մեջ տեխնոլոգիաների ու մեդիայի ներգրավումը վերջին տարիներին մեծ հետաքրքրության է արժանանում եվրոպական երկներում. մեդիան հիմնականում դառնում է վաղ մանկության խաղերով իրականացվող կրթության մի մասը՝ աջակցելով երեխաների հետազոտական, խաղային կրթությանը, գրագիտության տարբեր ընկալումների ձևավորմանը (Herdzina, Lauricella, 2020):

Եվրամիության կողմից ֆինանսավորված DigiLitEY հետազոտության հեղինակները խորհուրդ են տալիս քաղաքականություն մշակողներին ավելի լայնացնել վաղ մանկության կրթության մեջ գրագիտության ընկալումը՝ ներառելով թվային գրագիտությունը ուսուցիչների կրթության մեջ՝ տալով նրանց հմտություններ ներգրավել մեդիան դասավանդման մեջ: Նաև առաջարկում են ներգրավել գրադարանավարներին՝ գրադարաններում ստեղծելով երեխաների թվային գրագիտությունը զարգացնելու միջավայր: Երկկտն ինստիտուտը խորհուրդ է տալիս մեդիագրագիտությունը տարրալուծել նախադպրոցական ծրագրում, չդարձնել առանձին պարապմունք. ոչ թե դասի պլաններ, այլ դրվագներ (Herdzina, J. & Lauricella, A. R., 2020):

Եվրոպական երկրներից 26-ի կրթական ուղեցույցներում նշվում է թվային

կրթությունը, որոնցից 10-ում՝ այն սկսվում է մինչև 3 տարեկանը: Ընդ որում, մոտեցումները տարբեր են. որոշ երկրներ շեշտը դնում են դասավանդման մեջ մեդիայի կիրառության վրա, մյուսները՝ երեխայի թվային կարողությունների զարգացման վրա:

Տրանսիայի ազգային կրթական չափորոշիչներում նշված է հաղորդակցության հմտությունը, և խորհուրդ է տրվում, որ երեխաները կիրառեն թվային գործիքներ միմյանց հետ հաղորդակցվելու համար: Թվային բովանդակությունն ստեղծելու և մշակելու հմտությունը շեշտվում է, օրինակ Շվեյցարիայի գերմանախոս հատվածի կրթական ծրագրերում, իսկ Նորվեգիան շեշտում է երեխաների անվտագությունը թվային միջավայրում: Ջեկույցն արվել է էրասմուս ծրագրին մասնակցած 38 երկրներում գործող 43 կրթական համակարգերի ուսումնասիրության արդյունքում (EC, 2019):

Ընդհանուր առմամբ, Եվրոպացի ծնողների մեծամասնությունը կարծում է, որ թվային հեղափոխությունը անխուսափելի է, թեև նրանցից շատերը վախեր ունեն, կարծում են, որ էկրանը և խաղերը բացասաբար են ազդում երեխաների վրա, նրանք դառնում են բարկացկոտ, զգացմունքային, կամակոր: Շատերը խոստովանում են, որ դիմում են տեխնոլոգիաներին՝ երեխային զբաղեցնելու, հանգստացնելու համար, և երեխաներն էլ նշում են, որ իրենց համար տեխնոլոգիան հիմնականում չձանձրանալու և զվարճանալու միջոց է (Chaudron et al, 2018):

Այդ նույն հետազոտությունը պարզել է, որ այն ծնողները, որոնք ավելի լավ են տիրապետում թվային տեխնոլոգիաներին և միջին ու բարձր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեն, ավելի դրական են վերաբերվում տեխնոլոգիաների կիրառությանը կրթության մեջ:

Իհարկե, այս վերաբերմունքը կախված է նաև տվյալ հասարակության մեջ տեխնոլոգիաների ինտեգրվածության աստիճանից և կրթության մեջ դրա իմաստավորված լինելուց (Chaudron et al, 2018):

Սկանդինավյան երկրներում ծնողները «բնական» են համարում տեխնոլոգիաների կիրառությունն ու ներկայությունը երեխայի կյանքում, այդ թվում՝ մանկապարտեզում ու դպրոցում, այնինչ Կենտրոնական և Հարավային Եվրոպայում ծնողները ավելի հաճախ են դեմ եղել տեխնոլոգիաներին՝ «բնական զբաղմունք» համարելով բացօթյա գործողություններն ու խաղերը: Նշվում է, որ Արևելյան Եվրոպայի երկրներում և Ռուսաստանում ավելի շատ են ծնողները, որ ռիսկերի կողքին տեսնում են նաև տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները (Chaudron, 2018):

Եղած հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխայի կողմից տեխնոլոգիաների կիրառությունն ավելի բազմազան է, երբ դա խթանում է դպրոցը/մանկապարտեզը՝ հստակ մեթոդաբանությամբ և նպատակային: Օրինակ մանկապարտեզներում ինտերակտիվ գրատախտակների կիրառության միջոցով երեխաները կարողանում են համացանցային ռեսուրսներից օգտվել՝ իրենց հետաքրքրող թեմայով, դիցուք՝ սպիտակ արջերի մասին տեղեկություններ ստանալու համար: Այփադի կիրառությունը նաև զարգացնում է մոտորիկական, ստեղծագործականությունը (Berson, 2014):

Նման դեպքերում ծնողները նույնպես ավելի դրական են վերաբերվում տեխնոլոգիաների կիրառությանը: Բայց դրանց ինտեգրումը հատկապես նախադպրոցական կրթության մեջ թե՛ հանրային քննարկումներ է առաջացնում անզամ նույն Հյուսիսային երկրներում, օրինակ Դանիայում շտայներական ուղղվածության մանկապարտեզն է ընդդիմացել:



Շտայներական կամ վալդորֆյան տիպի կրթական համակարգերում թվային տեխնոլոգիայի կիրառությունն ընդհանրապես չի խրախուսվում. այս դպրոց/պարտեզները հայտնի են բնական նյութերի կիրառությամբ, արվեստի, ֆիզիկական ու հողագործական աշխատանքի շեշտադրումներով:

Shining Mountain ամերիկյան վալդորֆյան դպրոցի ձևակերպմամբ՝ վաղ հասակում տեխնոլոգիան առաջին հերթին սեփական մարմինը և դրա հաղորդակցումը աշխարհի հետ հասկանալի է, տեխնոլոգիա բացահայտել, նաև նշանակում է սովորել, թե ինչպես կարելի է հեշտացնել, բարելավել այս կամ այն գործընթացը, աշխատանքը, որը այս տարիքում չպիտի ներառի թվային տեխնոլոգիաներ, այլ քար, ջուր, փայտ, ավազ....

Իսկ 2019 թվականին Շտայներ-վալդորֆյան կրթության միջազգային ֆորումը, անդրադառնալով մեդիակրթության կարևորությանը, շեշտում է, որ պատասխանատու մեդիակրթությունը ժամանակակից կրթության շատ կարևոր մաս է: Մակայն նախադպրոցական հաստատություններում այդ կրթությունը պիտի իրականացվի բացառապես ոչ թվային մեդիայի համատեքստում՝ գիրք, նկարներ, անալոգային մեդիա:

Հետխորհրդային տարածքում մեդիակրթությունը տարբեր դրսևորումներ ունի: Ռուսաստանում այն նախադպրոցական կրթության չափորոշիչներում տեղ չունի, բայց այստեղ մասնագիտական կազմակերպությունների, մանկավարժների կողմից տարբեր ծրագրեր են իրականացվում, թեման ուսումնասիրվում է մանկավարժական բուհերում: Օրինակ Նախադպրոցական մանկավարժության միջազգային ակադեմիան Մոսկվայում զբաղվում է նախադպրոցական մանկավարժների վերապատրաստումներով: Ակադեմիան ունի նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոն, որի ուշադրության կենտրոնում են մեդիակրթության հարցերը: Ամբիոնի մասնագետ Իրինա Կոմարովայի խոսքով՝ մեդիակրթությունը պետք է սկսել վաղ տարիքից, դաստիարակները պիտի կարողանան ապահով և թիրախային օգտագործել թվային գործիքները, և դա չշփոթեն պարզապես էկրաններ ունենալու և օգտագործելու հետ (Комарова И., 2020):

«Մեդիակրթությունը անձի զարգացումն է տեխնոլոգիայի, մեդիա գործիքների և բովանդակության օգտագործմամբ: Սա ներառում է այդ օգտագործման կանոնների իմացությունը», - ասում է Կոմարովան՝ հարցազրույց տալով 2020 թ. Վաղ տարիքի երեխաների կրթության 10-րդ միջազգային համաժողովի կազմակերպիչներին:

Ղրիմի Մեդիա-կինո կենտրոնի մեդիամանկավարժ Ելենա Կուցենկոն ասում է, որ իրենց կենտրոնն է աջակցում տեղի մանկապարտեզներին, ծրագրեր ու մեթոդներ առաջարկում:

«Անիմացիան ամենահարմար մեթոդն է նախադպրոցական երեխաների էմոցիոնալ դաշտը զարգացնելու համար: Ել իհարկե, շատ լավ է ստացվում, երբ մանկապարտեզում երեխաների հետ փորձում ենք այուժետ հորինել, հերոսներ մտածել, ստեղծագործել», - որպես մոտեցում առաջարկում է Կուցենկոն:

Ուկրաինայում, Բելոռուսում, Վրաստանում, Ղազախստանում հասարակական, մանկավարժական կազմակերպություններն ու բուհերն են, որ աջակցում են մանկակավարժներին, վերապատրաստումներ են իրականացնում, ծրագրեր մշակում:


Ուկրաինայում պետությունը ներդրել է մեդիագրագիտությունը կրթության բոլոր մակարդակներում՝ 2017-2022 թվականների փորձարկվող ծրագրում: 2020թ. հաստատ-



ված նախադպրոցական պետական չափորոշչում ներառվել է թվային կարողունակությունը. «Գիտելիքի, կարողությունների, վարքի և բնավորության առանձնահատկություններ, որ անհրաժեշտ են երեխային, որպեսզի կարողանա օգտագործել տեղեկատվական-հաղորդակցական և թվային տեխնոլոգիաները իր կարիքների և կրթական ու խաղային խնդիրների լուծման համար» (Базовий Компонент Дошкільної Освіти, 2020):

Ուկրաինայում թեմայի հիմնական ջատագոժու ու բովանդակություն ստեղծող Ուկրաինայի Մամուլի Ակադեմիան է, որ մշակում է նյութեր և իրականացնում ուսուցիչների վերապատրաստումներ: Ուկրաինան նույնպես արձանագրել է երկու հիմնական խնդիր. երեխաների մեղիագրագիտությունը բարելավելու համար անհրաժեշտ է, որ ծնողներն ու դաստիարակները ունենան մեղիագրագիտության բարձր մակարդակ, և ավելի շատ լինեն որակյալ կրթական, մեթոդական ռեսուրսները (Yankovich O. et al, 2019):

Եվրոպայում մեղիագրագիտության ինդեքսով առաջատարները Ֆինլանդիան, Դանիան, Նիդերլանդները, Շվեդիան և Էստոնիան են: Իհարկե, պետք է նկատի ունենալ ինդեքսավորման մեթոդաբանությունը. այստեղ մեծ տեղ է հատկացվել այս երկրների մեղիայի ազատությունների ինդեքսին, ապա նաև գրագիտության միավորներին, հատկապես կարդալու գրագիտությանը (Lessenki M., 2019):



Մեղիակրթության լավագույն փորձը ավելի լավ հասկանալու համար կուսումնասիրենք մի քանի առաջատար երկրների իրավիճակն ու փաստաթղթերը:

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ, ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինլանդիա

Ֆինլանդիայում նախադպրոցական կրթությունը պարտադիր է երեխաների համար և անվճար: Նախադպրոցական և դպրոցական կրթության կարևոր ու մեծ բաղադրիչ է մեդիագրագիտությունը, այն ամրագրված է պետական չափորոշչում, մեդիակրթության ռազմավարության մեջ: Մեդիակրթությունը համակարգելու և խթանելու, մեդիա մշակույթին հետևելու և դաշտը կարգավորելու համար Ֆինլանդիայի կրթության և մշակույթի նախարարության ենթակայությամբ ստեղծվել և գործում է Ֆինլանդիայի ազգային աուդիովիզուալ ինստիտուտը: Այն ստեղծվել է 2014 թվականին, բայց կառույցի հիմքում դեռ 20-րդ դարի կեսերից գործող ֆիննական ֆիլմերի դասակարգման ինստիտուտն ու պետական արխիվն են:

Ֆիննական ազգային նախադպրոցական չափորոշիչը շեշտում է, որ յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ ու արժեքավոր է, իրավունք ունի տեսանելի և լսելի լինելու, նկատվելու և հասկացված լինելու:

Ֆինլանդիայի ազգային աուդիովիզուալ ինստիտուտի առաջատար մասնագետ Լաուրի Պալսայի խոսքով՝ կառավարությունը շեշտում է խաղի կարևորությունը նախադպրոցական կրթության մեջ, իսկ նպատակն է բարելավել երեխայի սովորելու և զարգանալու ունակությունները, զարգացնել սոցիալական հմտությունները, առողջ ինքնագնահատականը:

Ֆիննական նախադպրոցական կրթությունը հիմնված է կարողունակությունների վրա (transversal competences), չափորոշիչը բազմագրագիտությունը՝ multiliteracy, առանձնացնում է որպես կարողունակություն:

«Երեխայի վիզուալ, գրելու, կարդալու, թվաբանական և մեդիա գրագիտությունների զարգացումը պիտի խթանվի: Այդ զարգացման համար մեծահասակը պիտի ապահովի օրինակներ, պիտի ստեղծի միջավայր, որտեղ երեխայի համար համապատասխան մշակույթ ու բովանդակություն կա, ինչպես օրինակ ֆիլմեր, մանկական մեդիաներ: Սա օգնում է խթանել երեխաների մասնակցությունը, բացում է նրանց աշխարհը, դարձնում այն ավելի համակարգված և նոր իմաստ է հաղորդում», - ասվում է ֆիննական նախադպրոցական չափորոշչում:

Վաղ տարիքի երեխաների մեդիակրթությունը աջակցում է երեխայի ստեղծագործականությանը, ինքնարտահայտմանը, օգնում երեխային քննադատորեն մոտենալ մեդիային և աղբյուրներին. սա ամրագրված է չափորոշչի մտածելու և սովորելու կարողունակության մեջ:

Ֆինլանդիայի ազգային աուդիովիզուալ ինստիտուտի առաջատար մասնագետ Մարա Սալունայի խոսքով՝ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հռչակագիրը ֆիննական կրթության, այդ թվում նաև մեդիակրթության հիմքն է: Մասնավորապես՝ պետք է միշտ հաշվի առնել երեխայի լավագույն շահը: Հռչակագրի 13-րդ հոդվածը շեշտում է երեխայի խոսքի ու արտահայտվելու ազատության, տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքը, իսկ 3-րդ հոդվածը ամրագրում է նրա պաշտպանված լինելու իրավունքը:



2019 թվականին վերանայված «Մեդիագրագիտությունը Ֆինլանդիայում. մեդիակրթության ազգային քաղաքականության» մեջ երեք հիմնական սկզբունք է ամրագրվում.

Մեդիակրթությունը համապարփակ է

Պետությունը պարտավոր է մեդիակրթությունը հասանելի դարձնել բոլորի համար՝ անկախ բնակության վայրից, սոցիալական կարգավիճակից, հնարավորություններից և հեռանկարներից:

Մեդիակրթությունը բարձրորակ է

Մեդիակրթությունը հիմնված է հետազոտության վրա, արդյունավետորեն վերահսկվում և գնահատվում է, բարելավվում ու կատարելագործվում:

Մեդիակրթությունը համակարգային է

Մեդիակրթությունը պիտի լինի շարունակական, լավ պլանավորված, ունենա անհրաժեշտ ռեսուրսներ, դառնա ինստիտուցիոնալ (Finnish Ministry of Education and Culture, 2019):

Փաստաթղթում շեշտվում է, որ չնայած Ֆինլանդիայում մեդիակրթության հարուստ փորձին, կա դասավանդողների վերապատրաստման և դասավանդման նյութերի մշակման կարիք: Աուդիովիզուալ ազգային ինստիտուտի մասնագետ Սարա Մալոման, Հանրային լրագրության ակումբի կազմակերպած վեբինարի ընթացքում ասում է, որ սա համատարած խնդիր է և գրեթե բոլոր երկրները ունեն սրա պակասը: Ինստիտուտը փորձում է լրացնել այդ բացը, ռեսուրսներ և ուղեցույցներ, նաև ֆիլմեր ու գրքեր է ստեղծում դասավանդողների և ծնողների համար (Մալոմա, 2021):

Նա շեշտում է, որ հատկապես նախադպրոցական տարիքում մեդիագրագիտությունը կարելի է զարգացնել ոչ թվային մեդիայի օրինակով, օրինակ՝ 3-5 տարեկանների խմբում կարելի է երեխաների հետ միասին պատի թերթ կազմել, որտեղ երեխաները իրենք կորոշեն իրենց համար կարևոր նորությունները, ընթացիկ իրադարձությունները բնորոշող լուսանկարները, կսկսեն հասկանալ մեդիայի ստեղծման պրոցեսը:

Դանիա

Դանիացի երեխաները աշխարհում «ամենաթվայնացվածներից» են. մինչև 7 տարեկան երեխաների 90%-ը տանն օգտվում է պլանշետից, և տեխնոլոգիաները կիրառվում են նաև Դանիայի նախադպրոցական կրթության մեջ, ըստ Օրիուսի համալսարանի պրոֆեսոր Սթին Յոհանսոնի (Johanson, 2020): Դանիան երկրորդն տեղն է զբաղեցնում եվրոպական երկրների մեդիագրագիտության ինդեքսում (Lessenki, 2019):

Թվային տեխնոլոգիաների կիրառությունը ամրագրված է Մանկավարժական ազգային ծրագրում, որտեղ, օրինակ՝ բնության ճանաչողությանը վերաբերող բաժնում նշվում է, որ երեխաները կարող են ուսումնասիրել թվային գործիքները, ինչպես՝ ասենք GPS-ը, վեբ-տեսախցիկներ, թվային կշեռք: Արվեստին և հաղորդակցությանը վերաբերող բաժնում ևս հղում կա տեխնոլոգիաների կիրառությանը՝ մանկավարժի ուղղորդմամբ և վերահսկողությամբ (Ministry of Children and Education, 2020):

Պրոֆեսոր Սթին Յոհանսոնը, որ նաև Երեխաների և երիտասարդների մեդիա խորհրդի նախագահն է (Danish Media Council for Children and Young People), Nordik Media Network-ի կազմակերպած վեբինարի ժամանակ պատմում է նաև հանրային թեժ

քննարկումների մասին, որոնց պատճառով թվային գրագիտությունը չդարձավ պետական չափորոշի կարևոր սկզբունքներից մեկը, ինչը նախապես պլանավորված էր:

«Շատ ծնողներ դեմ արտահայտվեցին, և եղան նաև մասնավոր մանկապարտեզներ, օրինակ շտայներական մանկապարտեզը, որ ասաց, թե երբեք չեն թույլ տա թվային տեխնոլոգիան կիրառել հաստատությունում: Արդյունքում՝ փաստաթղթում մնաց երկու փոքր բաժին», - ասում է Յոհանսոնը՝ բացատրելով, որ չափորոշիչը պարտադիր է նաև մասնավոր մանկապարտեզների համար (NordMedia Network, 2020):

Չափորոշի հանրային քննարկումներում ծնողները մտահոգություն էին հայտնում հատկապես էկրանային ժամանակի ու կախվածության մասին:

«Ծնողները տեխնոլոգիայի կիրառություն ասելով պատկերացում են էկրանի առջև անշարժ նստած երեխա. այս ընկալումը փաստում է նաև «Ո՞վ է էկրանի հետևում» (Who is sitting behind the screen) հետազոտությունը: Բայց սա սխալ պատկերացում է, և մանկապարտեզներում այսկերպ չի օգտագործվում էկրանը», - ասում է Յոհանսոնը:

Օրհուսի համալսարանի հետազոտության տվյալներով՝ Դանիայի մանկապարտեզների 79 տոկոսը օգտագործում է թվային մեդիա, մանկապարտեզների կեսը՝ դրանք օգտագործում է ամեն օր. 70.8 տոկոս դեպքերում երեխաները էկրանի առաջ են լինում առավելագույնը 10 րոպե, և միայն նախադպրոցական հաստատությունների 0.9 տոկոսի դեպքում է այդ ժամանակը տատանվում 30-60 րոպեի մեջ (Nielsen, 2020):

Թվային գործիքները օգտագործվում է նպատակային, մանկավարժական այս կամ այն խնդիրը իրագործելու համար, և հաճախ դրանք փոխարինում են հանրագիտարանների կամ ձայներիզների. օրինակ՝ յուրուրջյան երաժշտական վիդեոն օգնում է խմբային պարերին կամ երգերին:

Էլլա Նիլսենը, որ աշխատում է Դանիայի մանկապարտեզներից մեկում, ասում է, որ տեխնոլոգիան հնարավոր է դարձնել ընթացիկ գործողությունների մաս, օրինակ՝ անտառում զբոսնելիս օգտագործել պլանշետ՝ տեղեկություններ գտնելու, տարածքը ավելի լավ բացահայտելու համար: Ինտերակտիվ գրատախտակը օգնում է կենտրոնանալ ձայնի ու խոսքի վրա, սովորել ռիթմը (օրինակ՝ արևի վրա սեղմելով լսել/կոռահել արև բառի հետ ռիթմ կազմող այլ բառ) (Nielsen, 2020):

«Ինչու՞ է մեդիագրագիտությունը կարևոր նախադպրոցական տարիքում. իմ կարծիքով երեխաներն արդեն ապրում են թվային հանրության մեջ, հատկապես Նորդիկ երկրներում նրանք շատ հաճախ են օգտագործում տեխնոլոգիաներ: Մենք գիտենք, որ տանը տեխնոլոգիաների կիրառությունը հիմնականում պասիվ սպառման ձևով է, հազվադեպ՝ ստեղծագործական նպատակներով, իսկ մանկապարտեզում հակառակն է», - ասում է Յոհանսոնը:

Մանկապարտեզը նաև հավասար պայմաններ է ստեղծում սոցիալական, ընտանեկան տարբեր միջավայրերից եկող երեխաների համար՝ օգտվելու տեխնոլոգիաներից, բոլորին հավասարապես սովորեցնում է գրագետ օգտվելու կանոնները:

Շվեդիա

Շվեդիայում, ինչպես շատ եվրոպական երկրներում, մեդիակրթության սկիզբը դրվել է դեռ 20-րդ դարի կեսերին. 1930-ականներից դպրոցներում կային դպրոցական ռադիոներ, ապա նաև դպրոցական հեռուստատեսություն, որոնք, իհարկե, սկզբում



միայն տեղեկատվական կամ կրթական գործիք էին դիտվում: Բայց արդեն 1960-ականների չափորոշում կարևորվում էր ֆիլմի ու մեդիայի մասին գիտելիքի ձևավորումը, այսօր պետական կրթական չափորոշիչը ներառում է «թվային կարողունակություն» ձևակերպումը:

Շվեդիայում մեդիագրագիտությունը ինտեգրված է հանրակրթության մեջ, այն առկա է դպրոցական առարկաների ծրագրերում, կան նաև մեդիա արտադրության մեջ մասնագիտացած քոլեջներ և ավագ դպրոցներ, որտեղ աշակերտները սեփական հաղորդումներն են պատրաստում, սովորում ոլորտի նրբությունները:

Մեդիակրթության մեջ կարևոր դեր են խաղում նաև լրատվամիջոցներն ու լրագրողական կազմակերպությունները: Օրինակ՝ Հանրային հեռուստաընկերությունը և Կրթական ռադիոն (UR) դպրոցական առարկաներին, նախադպրոցական կրթությանն աջակցող նյութեր են պատրաստում: Թերթերի ազգային ասոցիացիան ֆինանսական միջոցներ և ռեսուրս է տրամադրում՝ դպրոցներում մեդիագրագիտության դասերի ու ծրագրերի համար:

Շվեդ մեդիագրագիտության մանկավարժ Յորան Անդերսոնը պատմում է, որ Շվեդիայի մանկապարտեզներում տեխնոլոգիան օգտագործում են նկարներ ու տեսանյութեր դիտելու համար. Յությունում մանկական տեսանյութեր են դիտում, օգտվում են շվեդական հանրային հեռուստատեսության մանկական հաղորդումներից, լսում են կրթական ռադիո, ապա քննարկում են, թե ինչ տեսան ու լսեցին: 6 տարեկանների հետ արդեն գրուցում են նաև սոցիալական ցանցերի՝ Տիկտոկի, Յությունի մասին:

Նախադպրոցական կրթության պետական չափորոշում նշվում է, որ «խաղն է երեխայի զարգացման, կրթության ու բարօրության հիմքը», այն օգնում է երեխային կրկնօրինակել, երևակայել, իմաստավորել տպավորությունները, զարգացնում է մոտորիկական, հաղորդակցական, խնդիրների լուծման հմտությունները: Փաստաթուղթը շեշտում է նաև կրթության դեմոկրատական հիմքը, որտեղ երեխաները զերծ են խտրականությունից, ունեն հավասար հնարավորություններ, կրթվում են բաց, ապահով, փոխադարձ հարգանքի վրա հիմնված միջավայրում, կրթությունը պիտի լինի հաճելի, դառնա ցկյանս ուսումնասիրության սկիզբը (Curriculum for the Preschool, 2019):

Ըստ չափորոշի կրթությունը պիտի հնարավորություն տա երեխային հասկանալ իրեն շրջապատող թվայնացող աշխարհը, զարգացնել քննադատական, պատասխանատու վերաբերմունք թվային տեխնոլոգիաների նկատմամբ, որոնց շնորհիվ ի վերջո նրանք կհասկանան ռիսկերը և կգնահատեն տեղեկությունները: Ապա նաև շեշտվում է, որ թվային տեխնոլոգիան պիտի կրթությանն ու զարգացմանը նպաստող ձևով կիրառվի (Curriculum for the Preschool, 2019):

Շվեդական հետազոտություններում հաճախ կիրառվում է թվային խաղ (digital play) ձևակերպումը՝ վաղ տարիքի կրթության և զարգացման մեջ թվային տեխնոլոգիաների ներգրավման մասին խոսելիս: Թվային խաղը ամրագրված է Շվեդական կրթական համակարգի թվայնացման ազգային ռազմավարության մեջ (2017), որը շեշտում է երեխաների, աշակերտների և ուսուցիչների շրջանում թվային կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և տեխնոլոգիաների կիրառությունը նախադպրոցական և դպրոցական կրթության մեջ (Marklund, 2018):

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում մեդիագրագիտության տարածման հիմնական պատասխանատուն ոչ թե կրթության նախարարությունն է, այլ մեդիա դաշտը կարգավորող մարմինը՝ Ofcom –ը, որ ուսումնասիրում է երեխաների մեդիա սպառումը, խնդիրները, ստեղծում է ռեսուրսներ մեդիակրթության համար:

Քաղաքականություն մշակողները կարծում են, որ մեդիագրագիտությունը բավարար չափով ներառված է դպրոցական ծրագրում, ուսուցիչները վստահ են, որ դպրոցական ծրագիրը բավարար չափով չի պատրաստում երեխային՝ թվային աշխարհում ապրելու համար (Polizzi, 2020):

Դպրոցական ավագ դասարաններում աշակերտները կարող են ընտրել մեդիա ուսումնասիրություններ (media studies) առարկան, որ հիմնված է մեդիայի արտադրության համատեքստն ու ընթացքը հասկանալու, ուղերձները վերլուծելու, մեդիա ստեղծելու և այդ բովանդակությունը գնահատելու կարողությունների վրա: Այլ առարկաներում կան մեդիագրագիտության բաղադրիչներ՝ քննադատական մտածողությունը լեզվի դասերում, հասարակական քաղաքական խոսույթի և մեդիայի ազդեցության վերլուծությունը՝ հասարակագիտության մեջ, կեղծ տեղեկության ազդեցությունը առողջության վրա ներառված է ֆիզկուլտուրայի և առողջ ապրելակերպի ծրագրերում:

Անգլիայի Վաղ տարիքի կրթության չափորոշիչի մեջ տեխնոլոգիան նշվում է «Աշխարհաճանաչողություն» բաժնում: Աշխարհը ճանաչելն, ըստ փաստաթղթի, նախադպրոցական կրթության նպատակներից մեկն է:

«Երեխաները գիտակցում են, որ տանը և դպրոցում օգտագործվում են բազմազան տեխնոլոգիաներ: Նրանք ընտրում և օգտագործում են տեխնոլոգիան կոնկրետ նպատակների համար», - ասվում է փաստաթղթում (Department of Education, 2017):

Չափորոշիչը կրթական այլ ոլորտներում ևս ներառում է հմտություններ և կարողություններ, որ ընդհանուր առմամբ աջակցում են երեխայի մեդիագրագիտության ձևավորմանը, թեև առանձնահատուկ նշում մեդիայի կիրառության կամ մեդիան հասկանալու մասին չկա: Հաղորդակցություն և լեզու, սոցիալական հմտություններ, գրագիտություն, արվեստ բաժիններում կարևորվում է երեխայի շփումը գրքերի ու տեքստերի հետ, երեխայի ինքնարտահայտման հնարավորությունների բացահայտումը, լեզվի զարգացումը: Արվեստի բաժնում նաև նշվում է, որ երեխան զարգացնում է ստեղծագործելու և քննադատորեն մտածելու կարողություններ՝ սեփական գաղափարները գեներացնելը, գաղափարների միջև կապեր գտնելու, դրա միջոցով ռազմավարություն մշակելու և քայլեր ձեռնարկելու համար (Department of Education, 2017):

2018 թվականին անցկացված հարցման տվյալներով նախադպրոցական հաստատությունների մանկավարժների 89%ը մանկապարտեզում ունի համացանցի հասանելիություն, 82%ը՝ թվային տեսախցիկ, 81%-ը՝ համակարգիչ, 71%-պլանշետ, 63%- հեռուստացույց, և միայն 30%-ը՝ ինտերակտիվ էկրան (Blackwell, 2019):

Թվային տեխնոլոգիաների կիրառության բազմաթիվ ռեսուրսներ և ուղեցույցներ կան՝ մասնագիտական, մանկավարժական կառույցների կողմից մշակված: Education Endowment Fund-ի Վաղ տարիքի կրթության ուղեցույցում տեխնոլոգիան առանձին բաժին ունի. այն խորհուրդ է տրվում 4+ տարիքի երեխաների համար:

«Թվային տեխնոլոգիայի կիրառումը ենթադրում է օգտագործել համակարգիչ և



այլ թվային գործիքներ երեխայի զարգացումն ու կրթությունը խթանելու համար: Սա ներառում է տարբեր մոտեցումներ՝

-Երեխան օգտագործում է տեխնոլոգիան (ինտերակտիվ գրատախտակ, տեսախցիկ) ինքնուրույն՝ որպես վարժության, կրթական խաղի մաս:

-Տեխնոլոգիան օգտագործում է մանկավարժը՝ մասնագիտական զարգացման համար» (Education Endowment Fund, 2019):

ԱՄՆ

ԱՄՆ-ը բարդ կրթական համակարգ ունի, ըստ այդմ շատ իրավական փաստաթղթեր, ռազմավարություններ ունեն մի քանի մակարդակ՝ համազգային, նահանգային, համայնքային: ԱՄՆ-ի կրթության ազգային չափորոշիչները տալիս են ընդհանուր ուղենիշը, դրանց հիման վրա մշակվում են նաև նահանգային չափորոշիչներ:

Նահանգների մեծ մասում այդ չափորոշիչները ներառում են մեդիագրագիտությունը, բայց դա չի նշանակում, թե մեդիակրթությունը համատարած է ամերիկյան մանկապարտեզներում, ասում է Թեմփլի համալսարանի մեդիագրագիտության կենտրոնի ղեկավար Շերի Քուլվերը: Նրա խոսքով շատ բան կախված է տնօրենների հայեցողությունից և ուսուցիչների պատրաստվածությունից: Այնուամենայնիվ, որքան փոքր է երեխայի տարիքային խումբը, մեդիագրագիտությունը այնքան քիչ է ներառված ծրագրերում և մանկապարտեզային տարիքում դրա պահանջը ձևավորված չէ:

ԱՄՆ-ում կան մեդիագրագիտության տարածմամբ զբաղվող ասոցիացիաներ ու կազմակերպություններ, որոնք օգնում են մանկապարտեզներին ու դպրոցներին:

NAMLE-ն՝ մեդիագրագիտություն ուսուցանողների ազգային ասոցիացիան, առաջնորդում է մեդիագրագիտության շարժումը նահանգներում՝ միավորելով հազարավոր ուսուցիչների և դասավանդողների: NAMLE-ի՝ մեդիագրագիտության ձևակերպումը ամենադասական և ընդունված մոդելն է աշխարհում:

Մեդիագրագիտությունը՝ հաղորդակցության միջոցներին հասանելիություն ունենալու, դրանք վերլուծելու, գնահատելու, դրանց միջոցով ստեղծելու և գործելու կարողությունն է (NAMLE, 2021):

Common Sense հասարակական կազմակերպությունը կրթական ռեսուրսներ, դասի պլաններ, ուղեցույցներ ու խորհուրդներ է տրամադրում ուսուցիչներին, դաստիարակներին և ծնողներին, նաև՝ երեխաներին: Սա այն բացառիկ հարթակներից է, որ նաև մասնագիտորեն քննում և ռեյտինգավորում է երեխաների համար ստեղծվող բովանդակությունը, նշելով լսարանի տարիքը, ֆիլմի/մուլտֆիլմի/յություբյան ալիքի բովանդակության վտանգներն ու առանձնահատկությունները: Սա շատ է օգնում ծնողներին:

Common Sense-ն առաջարկում է Թվային քաղաքացիության կրթության հայեցակարգ, որ պարունակում է դասի պլաններ մանկապարտեզի և դպրոցական բոլոր դասարանների համար և հիմնված է հինգ հիմնական մոտեցումների վրա.

- Կանգ առնել և անդրադառնալ- չտրվել զգացմունքներին և առաջին տպավորությանը, մտածել,
- Բացահայտել հեռանկարները- լինել հետաքրքրասեր և բաց մտքով, հիշել, որ ուրիշները կարող են այլ տեսակետ ունենալ և հաշվի առնել նրանց զգացմունք-

ները, արժեքները, նկատի ունենալ էթիկական, բարոյական, քաղաքացիական նորմերն ու պարտականությունները,

- Փնտրել փաստեր և ապացույցներ - փաստեր հավաքել տարբեր աղբյուրներից, ծանրութեթև անել ապացույցները,
- Քայլեր ձեռնարկել - սեփական թվային վարքագծում փոփոխություններ անել, անհրաժեշտության դեպքում օգնության դիմել, աջակցել ուրիշներին:

Մանկապարտեզի համար այս ծրագրում մասնավորապես շեշտվում է մեղիաբալանսի թեման. թե ինչպես երեխան սովորի բալանսավորել մեղիայի օգտագործումը, կարողանա անջատել գործիքը, «ցտեսություն ասել» և մտածել իր սպառած բովանդակության մասին: Նաև կան պարզ պատկերացումներ «թվային հարևանության» և տարածքը ապահով պահելու մասին:

ԱՄՆ-ի Փոքր երեխաների կրթության ազգային ասոցիացիայի պաշտոնական հաղորդագրության մեջ օգտագործվում է թվային գրագիտություն ձևակերպումը՝ նշելով, որ դա ներառում է և՛ մեղիագրագիտությունը և՛ տեխնոլոգիաների կիրառությունը: Ասվում է, որ նպատակային և մտածված օգտագործման դեպքում տեխնոլոգիաները և ինտերակտիվ մեղիան նպաստում են երեխայի կրթությանն ու զարգացմանը: Դրա արդյունավետ կիրառությունը ենթադրում է խաղային, ակտիվ, համագործակցային միջավայր և գործողություն (Ribeout, 2020):

Ասոցիացիան խորհուրդ է տալիս առհասարակ գերծ մտալ վիդեոյի պասիվ սպառումից մինչև երկու տարեկանը, նաև չի խրախուսում դա 2-5 տարեկանում:

ԱՄՆ-ում ծնողները հիմնականում դրական վերաբերմունք ունեն տեխնոլոգիաների կիրառության նկատմամբ, կարծում են՝ նպաստում է սովորելուն, զարգացնում է ստեղծագործականությունը, և միայն ֆիզիկական ակտիվության առումով է բացասաբար ազդում երեխայի վրա (Ribeout, 2020):

Շերի Քուլվերը, որ երկար տարիներ զբաղվում է երեխաների մեղիագրագիտության ուսումնասիրությամբ և դասավանդում է բուհում, կարծում է, որ տեխնոլոգիաների կիրառումն արգելելն ամենասխալ մոտեցումն է. սկսած 5-6 տարեկանից պետք չի արգելել կամ վախեցնել, պետք է օգնել ճիշտ կիրառել, կայացնել ճիշտ որոշումներ, հասկանալ և վերլուծել այդ կիրառությունը: Ավելի վաղ տարքում պարտադիր չէ տեխնոլոգիաների կիրառությունը, բայց անհրաժեշտ է մեղիայի մասին խոսակցությունը, քննարկումը:

«Մենք չենք սպասում, որ երեխան դառնա դպրոցական, որ նրա հետ խոսենք ճիշտ ուտելու մասին. երբ նա կոնֆետ է ուզում, մենք ասում ենք, որ կոնֆետը կարելի է բանրաջեղենը ուտելուց հետո, որ շատ կոնֆետը վնաս է... Երեխայի հետ պետք է խոսել մեղիայի մասին, դրա օգտագործման կանոնների, լավ ու վատ կողմերի մասին», - ասում է Քուլվերը:

Կարելի է պարզ հարցեր տալ երեխային՝ ինչի՞ համար ես ուզում, քո կարծիքով որքա՞ն երկար ճիշտ կլինի խաղաս/նայես, ինչու՞, ո՞վ է ստեղծել այս մուլտը, ինչու՞ այս տեսքը ունի այս կամ այն հերոսը, ու՞մ պետք է հավատալ և ինչու՞ ...

Շերի Քուլվերի խոսքով մինչև 3-4 տարեկանը մեղիագրագիտությունը ծնողի անելիքն է. ինչպես ծնողը կարևորում է գիրք կարդալը երեխայի համար, գրքերը գրադարակում գեղեցիկ շարելը, խնամքով հեքիաթ ընտրելը, այդպես էլ պետք է մեղիայի



մյուս տեսակների հետ վարվի: Ծնողը պիտի մտածված որոշումներ կայացնի երեխայի մեղիա սպառման մասին, նրա հետ միասին դիտի ու քննարկի (Քուլվեր, 2021): Այդ տարիքի համար շատ կարևոր է ծնողի օրինակը. ծնողը երեխային պիտի ցույց տա, որ ինքը կախված չէ համակարգչից կամ հեռախոսից, նաև բացատրի, թե ինքն ինչ է անում համակարգչով, ինչպես է տարբեր նպատակներով օգտագործում այն:

Այս ամենով հանդերձ մանկապարտեզի դերը մեծ է: Շերի Քուլվերը կարծում է, որ 4-5 տարեկանում մանկապարտեզը շատ պարզ սկզբունքներ կարող է սովորեցնել երեխային՝ օրինակ անջատել գործիքը խաղը, վարժությունը անելուց հետո: «Դաստիարակը, օրինակ, կարող է երեխաների հետ քննարկել, թե տներում ինչ գործիքներ են օգտագործում, ապա հեքիաթի միջոցով քննարկել: Օրինակ՝ երեք արջերի հեքիաթում եթե Այփադ լիներ, ի՞նչ կփոխվեր, ինչու, ինչպե՞ս իրար հետ կխոսեին մայրն ու բալիկ արջը, եթե լիներ հեռախոս, կամ ինչու՞ էս այդպես մտածում, որտե՞ղ էս տեսել, որ այդպես կիրառեն տեխնոլոգիան» (Քուլվեր, 2021):

Մեղիագրագիտության ամերիկյան առաջամարտիկներից Ֆեյթ Ռոգոուն առաջարկում է նախադպրոցական տարիքում մեղիակրթությունը խարսխել երեք հիմնական սկզբունքի վրա.

1. Պարզել, թե ով է պատմում պատմությունը (հեքիաթի հեղինակը, ֆիլմի ռեժիսոր, հաղորդավար...)
2. Հասկանալ պատմությունը (քննարկել ֆիլմը, մուլտը, հեքիաթը, թույլ տալ երեխային վերապատմել այն, կարծիք հայտնել)
3. Ճանաչել մեղիայի լեզուն (հասկանալ, որ ինչպես գրավոր տեքստը կազմված է տառերից, այնպես էլ վիզուալ տեքստը կազմված է կադրերից, բեմադրված դրվագներից) (Rogow, 2002):

1960-ականների վերջից ԱՄՆ-ում հայտնի մանկական հաղորդման՝ Mister Rogers' Neighborhood-ի հիմքի վրա ձևավորված Fred Roger Center-ը նույնպես զբաղվում է երեխաների մեղիակրթությամբ: Կենտրոնի հիմնադիր Ֆրեդ Ռոջերը շեշտում է, որ վաղ տարիքում թվային մեղիայի կիրառությունը պիտի լինի սահմանափակ, վերահսկվող և նպատակային: Նա առաջարկում է երեխաների և մեղիայի շփումը դիտարկել երեք կարևոր հարցերի համատեքստում.

- Արդյոք այդ շփումը նպաստո՞ւմ է երեխայի ինքնաճանաչմանը, ինքնաբացահայտմանը, նրա կարողությունների ու վստահության ամրացմանը:
- Ինչպե՞ս է մեղիան օգնում երեխային շփվել, համագործակցել ընկերների, ընտանիքի անդամների և այլոց հետ:
- Ինչպե՞ս կարող է մեղիայի կիրառությունը օգնել երեխային սիրել բնությունը, ավելի լավ հասկանալ հեռու և մոտ ապրող մարդկանց ու կենդանիներին, ապրումակցել նրանց (Fred Roger Center, 2015):

ԱՄՆ-ում այս բոլոր մոտեցումները իրար փոխլրացնում են և դպրոցները ազատորեն օգտվում են առկա հարուստ ռեսուրսներից, որոնք հիմնականում տրամադրում են հասարակական կազմակերպությունները և մասնագիտական ասոցիացիաները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

Նախադպրոցական կրթության դաշտը

Նախադպրոցական կրթությունը, դրա բովանդակության առանցքային կարգավորող բաղադրիչներով՝ չափորոշիչներով ու ծրագրով, հանրակրթության մաս է կազմում և հիմնականում կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով և այլ օրենքներով ու իրավական ակտերով: Կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները համապատասխան օրենքներով («Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքներ) իրականացնում են ոլորտի կառավարումը:

ՀՀ-ում գործող ավելի քան 880 նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախում է ավելի քան 80.000 երեխա (Վիճակագրական կոմիտե, 2019թ.): Նախադպրոցական կրթությամբ սակայն, զբաղվում են նաև զարգացման կենտրոնները, որոնք ըստ էության, գտնվում են ԿԳՄՄՆ վերահսկողությունից դուրս, սակայն առաջարկվող նոր չափորոշչով և օրենսդրական փոփոխություններով դրանք ևս լիցենզավորվելու են և վերահսկվելու. նախադպրոցական բոլոր ծառայությունների լիցենզավորման կարգը կառավարության հավանությանն է արժանացել 2021թ. մարտի 4-ին. մինչև այդ լիցենզավորումը տարածվում էր միայն նախադպրոցական ծրագրերի վրա (ԿԳՄՄՆ, 2021):

Ինչ վերաբերում է չափորոշիչներին, ապա դրանց հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է լինելու նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունների համար՝ անկախ կազմակերպա-իրավական ձևից:

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչները

Նախադպրոցական կրթության կամ Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական գործող չափորոշիչները (այսուհետ՝ Չափորոշիչներ), մշակվել են մոտ տասը տարի առաջ, 2011թ-ին, վերանայվել 2018թ-ին: Հիմա դրանց հերթական վերանայումը ԿԳՄՄ նախարարության կողմից ընթացքի մեջ է. մարտի 10-ին հանրային քննարկման է ներկայացվել Չափորոշիչի նոր նախագիծը: Գործող չափորոշիչի մշակման մեջ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) և պետական գերատեսչության համատեղ աշխատանքում մեծ օժանդակություն են բերել բազմաթիվ առանձին անհատ մասնագետներ (հոգեբաններ, սոցիոլոգներ և այլն), նախադպրոցական կրթությամբ և երեխաների իրավունքներով զբաղվող կազմակերպություններ: Որոշ մասնագետներ նույնիսկ նշում են, որ այս չափորոշիչը ամենահամապարփակն ու ընդգրկունն է, և որ նախադպրոցական տարիքի կրթության հետ առնչվող ամենաշատ խմբերը հնարավոր մասնակցություն են ունեցել ամբողջ գործընթացին: Նաև՝ այս չափորոշիչի հիմքում ընկած են իրական փորձարկումներ, հետազոտություններ տարբեր մարզերում:

Այս ուսումնասիրության նպատակներից մեկն էլ այն է, որ հընթացս չափորոշիչների հերթական վերանայման, հնարավոր լինի տալ առաջարկություններ նախադպրո-



ցական կրթության մեջ (հատկապես 4-6 տարիքային խմբի համար) մեդիագրագիտության խթանմանը, քննադատական ու վերլուծական մտածելակերպի ձևավորմանը, թվային տիրույթում ավելի անվտանգ նավարկելու կարողությունների զարգացմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

Չափորոշիչները հաստատվել են Կրթության և Գիտության նախարարի N 257 Ն հրամանով 2011 թվականին: Համաձայն այդ որոշման Չափորոշիչների մշակման նպատակներից էր նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանումը, նրա ինքնաձանաչման, ինքնադրսևորման, համակողմանի ու ներդաշնակ զարգացման ապահովումը, կենսակերպի հիմքերի ձևավորումը ու սոցիալականացումը:

Գործող չափորոշիչի մշակման աշխատանքային խումբը չափորոշիչները ըստ զարգացման հետևյալ ոլորտների է բաժանել

1. Շարժողական զարգացում
2. Խոսք և հաղորդակցում
3. Իմացական զարգացում
4. Սոցիալական, հուզական և անձնային զարգացում
5. Ինքնասպասարկում, առողջության պահպանում և անվտանգություն
6. Սովորելու նկատմամբ վերաբերմունք

Բացի ոլորտային ու ենթաոլորտային բաժիններից, չափորոշիչների մատչելիությանը նպաստում է յուրաքանչյուր վերջնարդյունքի ցուցիչային ու օրինակների տեսքով ներկայացումը:

Չափորոշիչի հեղինակները, որպես դրա կիրառելիության կարևորության գործոններ նշում են բարելավումը ուսուցման, ծնողավարության հմտությունների փոխանցման, մանկավարժների մասնագիտական պատրաստության մեջ, ինչպես նաև նախադպրոցական ծրագրերի գնահատումը և հանրության շրջանում վաղ մանկության շրջանի վերաբերյալ գիտակցության բարձրացումը (Չափորոշիչներ, 2018, էջ 11):

Տեխնոլոգիան Չափորոշիչներում

2018թ-ին վերանայված Չափորոշիչների նախաբանում հեղինակները նշում են, որ գործընթացի հիմքում եղել է նաև որոշ ոլորտներում արագ փոփոխությունների առկայությունը և դրանց ազդեցությունը երեխաների զարգացման վրա, ինչպես տեխնոլոգիաների անվերահսկելի կիրառությունը հատկապես ընտանիքներում (Չափորոշիչներ, 2018):

Տեխնոլոգիաներին վերաբերող հատվածը ընդգրկված է Սովորելու նկատմամբ վերաբերմունք ոլորտում (սկսած 3-4 տարիքային խմբից), որը միտված է օգնելու մեծահասակներին վերահսկելու և կարգավորելու երեխաների կողմից տեխնոլոգիաների կիրառությունը, դրանց հետ շփումը:

Դասավանդողների օգնությամբ երեխաները ուսումնասիրում են իրական կամ խաղալիք սարքավորումները, տեղեկանում են դրանց ճիշտ անուններին, ամենահասարակ գործողություններից սկսում հասկանալ դրանց բնույթն ու գործառույթները (Չափորոշիչներ, 2018, էջ 77), հնարավորություն ունենում ընտանիքի անդամների հետ հաղորդակցվել այդ սարքերի միջոցով (Չափորոշիչներ, 2018, էջ 109):

Բացի տեխնոլոգիաների կամ մեդիա գործիքների մասին ընդհանուր պատկերացումներից Չափորոշիչներում նշված են մեդիագրագիտության կարևոր մաս կազմող իրավիճակին համապատասխան հարցադրումներ անելը, խնդիրների քննարկմանը և դրանց լուծումների մասնակից լինելը (Չափորոշիչներ, 2018, էջ 26):

Անվտանգ վարքագծի ձևավորումը կարևոր տեղ է գրավում չափորոշիչներում.



երեխաները նախադպրոցական տարիքից մեծահասակների ցուցումով սկսում են ուշադիր լինել անվտանգության կանոններին, խուսափում վտանգ ներկայացնող իրերի ու սարքավորումների հետ խաղալուց, գիտակցում է սեփական կյանքի անվտանգությունը (Չափորոշիչներ, 2018, էջեր 45, 49, 73, 105, 144, 176, 184): Իհարկե, տվյալ դեպքում խոսքը չի վերաբերում օնլայն գործիքներին, որոնք այսօր առաջնային գրավչություն ունեն երեխաների համար, ու առցանց միջավայրից բխող վտանգներին, որոնք այսօր պակաս մտահոգիչ չեն, հատկապես եթե հաշվի առնենք գործող չափորոշչային՝ երեխան հետաքրքրություն է ցուցաբերում նոր բաներ սովորելու և նոր փորձառությունների համար կետը՝ փորձելով խաղալ նոր խաղեր, սկսելով հարցեր տալ իր շրջապատին վերաբերող տեղեկություններ ստանալու համար և այլն (Չափորոշիչներ, 2018, էջ 51):

Չափորոշչի 3-4 տարիքային խմբին վերաբերող մասում խոսվում է գովազդի նկատմամբ երեխայի վերաբերմունքի մասին, նշվում, որ երեխան արձագանքում է գովազդային նյութին, հաղորդմանը, ծանոթ մեղեդիներին (Չափորոշիչներ, 2018, էջ 65), սակայն խոսքը դրա քննադատական ընկալման մասին չէ, այլ գուր ճանաչողության ու արձագանքելու:

Մեդիայի մաս համարվող պատկերազարդ գրքեր տեսնելիս՝ երեխան հարցադրումներ է անում (Չափորոշիչներ, 2018, էջ 38), տարբերում է տարբերանշանները (Չափորոշիչներ, 2018, էջ 128):

Ամենավաղ տարիքից երեխան մտապահում և վերարտադրում է որոշակի ինֆորմացիա (Չափորոշիչներ, 2018, էջ 22, 41, 63): Հասկանալի է, որ ինֆորմացիան երեխան ստանում է տարբեր աղբյուրներից՝ ոչ միայն ծնողից կամ խնամակալից, նաև անձանոթներից, այլ երեխաներից, նաև՝ իր շուրջը գոյություն ունեցող տեսաձայնային սարքավորումներից, հատկապես հեռուստացույցից:

Մեդիագրագիտության կարևորագույն մաս կազմող քննադատական միտքը ձևավորվում է նաև հարցադրումներ անելով: Տեղեկություններ ստանալու համար երեխան տալիս է ե՞րբ, ինչպե՞ս, որտե՞ղ հարցերը (Չափորոշիչներ, 2018, էջ 151), պատասխանում հարցերին (Չափորոշիչներ, 2018, էջ 157):

Մեկ այլ անբաժան ու առանցքային հմտություն՝ վերլուծություն անելը սկսում է տրված նկարների մեջ հակասությունները, անհեթեթությունները հասկանալով, անհնարինությունը մատնանշելով (Չափորոշիչներ, 2018, էջ 163), կռահում և ըմբռնում է, որ շատ հերոսներ հորինովի կերպարներ են (Չափորոշիչներ, 2018, էջ 160):

Այս դրվագները հուշում են, որ թեև չափորոշչում ձևակերպված չեն մեդիա և թվային գրագիտության կարողությունները, Նախադպրոցական կրթական չափորոշիչները թույլ են տալիս ստեղծել արդյունավետ կրթական ծրագրեր, որոնք կխթանեն երեխայի ստեղծագոծական ու քննադատական միտքը և կարող են հիմք լինել դպրոցական տարիքում առավել խորությամբ հասկանալու և կիրառելու մեդիա կարողությունները, քննադատական ու վերլուծական գործիքակազմը:

2021թ Փետրվարի 4-ին Կառավարության N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական չափորոշիչներում առանձնացված են ութ հիմնական կարողունակություններ, որոնցից մեկը՝ թվային և մեդիա կարողունակությունը նման կերպ է բնութագրված.

Սովորողներն ունեն տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություն և մեդիագրագիտություն, ընդունակ են կառավարել մեդիայի սպառումը և թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրա հետ կապված ռիսկերը: Նրանք ձևավորում են ժամանակակից տեխնոլոգիաների և

զարգացման միտումների վերաբերյալ գիտելիք և դրա կիրառման հմտություններ, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Մովորողները կարողանում են սեփական ուժերով ստեղծել մեդիա արտադրանք (Հանրակրթության չափորոշիչ, 2020):

Իսկ մարտի 10-ին հանրային քննարկման է դրվել Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշիչի նախագիծը, որը հարմարեցված է Հանրակրթության նոր չափորոշիչին և հիմնված է 9 կարողունակությունների վրա, որոնցից մեկը ԹՎային և մեդիա կարողունակությունն է հետևյալ ձևակերպմամբ.

Երեխան պատկերացնում է մեդիայի դերը հասարակական կյանքում, կողմնորոշվում մեդիայի բազմազանության մեջ, ընտրում և գնահատում անհրաժեշտ տեղեկատվությունը՝ ցուցաբերելով որոշակի վերաբերմունք դրա նկատմամբ: Տիրապետում է մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները: Երեխան ունի առարկաները, երևույթները մոդելավորելու և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները: Կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից (Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչի նախագիծ, 2021):

Կարողունակության սահմանումը, որ ամրագրված է Հայաստանի հանրակրթության նոր չափորոշչում, հետևյալն է.

«Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնասիրության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնասիրության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից» (Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021):

Նախադպրոցական Կրթական Ծրագրերը

Նախադպրոցական կրթության ծրագրերի մեծ մասը (2-3, 3-4, 4-5 տարիքային խմբեր) մշակվել են չափորոշիչներից հետո՝ 2011-2012 թթ-ին: 5-6 տարեկանների ծրագիրը մշակվել է չափորոշից առաջ՝ 2007թ-ին:

ԿԳ նախարարի N 257 Ն հրամանում ասվում է, որ Չափորոշիչի հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար: Այդուհանդերձ, չափորոշիչի գործածության մեջ մտնելուց ի վեր 5-6 տարիքային խմբի համար կրթական ծրագրեր չեն մշակվել, նաև՝ վերանայումից և լրամշակումից (2018) հետո, չնայած որ Կրթական ծրագրերին ի թիվս այլ պահանջների ներկայացվում է չափորոշիչին համապատասխան լինելը:

ԿԳՄՄՆ-ի ներկայացուցիչ Թեհմինա Կարախանյանը նշում է, որ չափորոշիչի այս տարվա վերանայումից հետո ծրագրերը նույնպես փոփոխությունների կենթարկվեն:

Պահանջների մեջ նշվում է, որ Ծրագրերը նպատակաուղղված պետք է լինեն երեխաների մոտ հետաքրքրության և նրանց ընդունակությունների զարգացմանն ու հաղորդակցական հմտությունների և ստեղծագործական երևակայության ձևավորմանը:



Այս հետազոտության համար ուսումնասիրվել են հատկապես 4-5 և 5-6 տարիքային խմբերի համար մշակված ծրագրերը:

4-5 տարեկանների ծրագրում կարևորվում է կրթության զարգացնող գործառույթը, ազգային ու համամարդկային արժեքային համակարգը, որոնք կարող են հիմք լինել երեխայի անձի ձևավորման ճանապարհին:

Ծրագրի որպես առաջնային նպատակներ են նշվում երեխայի տվյալ տարիքին համապատասխան հոգեկան ու ֆիզիկական ներդաշնակ զարգացումը՝ կյանքի ու արդի հասարակության ըստ ամենայնի նախապատրաստելու, անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ ձևավորելու ակնկալիքով:

Ըստ ծրագրի տարիքային այս խմբին յուրահատուկ է հետաքրքրասիրությունից դրդված շատ հարցեր տալը: Չնայած խնդիրների ձևակերպման մեջ կա նման շեշտադրում, որ այս ծրագրով պետք է շարունակել զարգացնել ուշադրությունը, խոսքը, տրամաբանական մտածողությունը, հիշողությունը, երևակայությունը և կամային որակները, սակայն չկա շեշտադրում, թե ինչպես հարցեր տալու, հետաքրքրասիրությունը խրախուսելու միջոցով կարելի է զարգացնել տրամաբանությունն ու երևակայությունը: Հարցեր տալու, քննարկելու, ուսումնասիրելու կարողության զարգացումը կարևոր է երեխայի ինքնարտահայտվելու ինքնաճանաչման կարողությունը զարգացնելու տեսանկյունից: Հարցադրումներ անելը, տարբեր երևույթների վերաբերյալ հարցեր տալը, ճշմարտության որոնման սաղմնային այս արտահայտությունները կարևորագույն դերակատարում ունեն քննադատական մտածողության, վերլուծական մտքի ձևավորման մեջ:

Ծրագրի նպատակադրումների մեջ նշված է, որ օգտագործված են նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժական, նորարարական մեթոդաբանության և տեխնոլոգիայի հիմունքները, սակայն սա միակ տեղն է, որ տեխնոլոգիա բառը օգտագործվում է այս ծրագրի մեջ (մեղիա, թվային գործիքներ և այլն ընդհանրապես չկան), չնայած մեկ-երկու անգամ նշվում է տեխնիկական միջոցներ օգտագործելու կարևորության մասին՝ կապված երաժշտական հմտությունները զարգացնելու հետ:

Սա մի խնդիր է, որ կարիք ունի շտկման և չափորոշչի հետ համապատասխանության բերելու, որի մեջ ամբողջական տեխնոլոգիա բաժին կա իր մանրամասնություններով:

Ծրագրում հանազամանալից ներկայացված են երեխաների ֆիզիկական զարգացման, արվեստի տարբեր ճյուղերին տարիքին համապատասխան հմտանալու մանրամասներ:

Մեծ շեշտադրում է արվում ծնողների հետ համագործակցությանը և նշվում է, որ դա երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Բավական մանրակրկիտ դասավորված են ծնողների հետ համագործակցության տեսակներն ու կերպերը՝ անհատական հանդիպում-քննարկումների, ժողովների, ծանուցողական այցերի, գիտելիքի ու փորձի փոխանակման միջոցով:

Համագործակցության մասով խրախուսվում է Գաղափարների տոնավաճառը, մանկավարժի հյուրասրահը, որոնք միտված են ավելի ամրացնելու ծնող-ՆՈՒՀ կապը փոխադարձ աջակցությամբ ու հետևողական նեգրավվածությամբ:

5-6 տարեկանների կրթական ծրագրում ասվում է, որ այս տարիքում ձևավորվում են իրականության նկատմամբ արժեքային վերաբերմունքի սաղմերը: Այս տարիքում երեխան դրսևորում է ճանաչողական, վերափոխման և հուզական արժեքներ:

Այս տարիքում է, որ երեխայի մոտ առավել ընդգծվում է նոր բաներ սովորելու, նոր գիտելիքներ ստանալու կարիքը, հետաքրքրվում է իր շուրջը տեղի ունեցող իրադարձու-

թյուններով:

Դրանով պայմանավորված շեշտադրում կա արտակարգ իրավիճակների ժամանակ երեխաների անվտանգ վարքի մասով, որը չափազանց կարևոր է, ինչպես նաև երթևեկության կանոնների իրազեկման մասին: Այդուամենայնիվ, այստեղ ևս հստակ երևում է, որ 2011-ին մշակված և 2018-ին լրամշակված չափորոշիչների հետ համապատասխանության մասով այս ծրագիրը բացեր ունի ոչ միայն բովանդակային, այլ նաև ժամանակային ու դրանից բխող տեխնոլոգիական առաջընթացին վերաբերող հարցերում. անվտանգությունը վերաբերում է միայն արտակարգ իրավիճակներին, իսկ մեդիան ու տեխնոլոգիաները չեն դիտարկվում պոտենցիալ վտանգ պարունակող դաշտեր:

Կարևոր ընդգծում է այն, որ ծրագրում խրախուսվում է երեխաներին հասկանալի ձևով բացատրել, թե ինչու է այս կամ այն բանը վտանգավոր, ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ սխալ արարքը, չներկայացնել միայն որպես արգելք, այլ իբրև համոզիչ, տրամաբանական բացատրություն. անվտանգ վարքագծի դաստիարակման նպատակն է ձևավորել զգույշ, այլ ոչ թե՛ «վախեցած պահելաձև»: Լինի դա զգույշ, զգոն, թե տեղեկացված ու գիտակից, սա ավելի տրամաբանական մի մոտեցում է, որ բանաձևում է մեդագրագիտության արդյունքահեն լինելը թվային տեխնոլոգիաների կիրառության պարագային. չարգելել, այլ տրամաբանության, այսինքն՝ նաև վերլուծական մոտեցմամբ ցույց տալ լավ ու վատ հետևանքների մասին:

Այս տարիքային խմբի համար էլ է կարևորվում հետաքրքրասիրության, ինտելեկտուալ կարողությունների ու հմտությունների, երևակայության զարգացումը:

Երեխայի ստեղծագործական ու քննադատական միտքը զարգացնող հուշումներ կան ծրագրում. օրինակ՝ սովորեցնել նկարը պատմելու ընթացքում նկարագրել բովանդակությունը, հորինել պատմվածքներ՝ նկարում պատկերվածի մասին, մտածել դեպքեր, որոնք նախորդել են պատկերվածին և հաջորդում են նրան:

Խաղերի նշանակությունը նույնպես ընդգծված է. դրանց ընթացքում երեխաները դիտում են, համեմատում, կատարում վերլուծություն, զարգացնում անկաշկանդ գործելու ունակությունը, ներքին ազատությունը և ինքնավերահսկումը:

Այս ծրագրում նույնպես չկա տեխնոլոգիա, մեդիա, թվային գործիքներ բառերը, ինչը էլ ավելի հասկանալի է, քան 4-5 տարեկանների ծրագրի դեպքում, քանի որ սա ստեղծվել է ավելի վաղ (2007թ), երբ նման փաստաթղթերում ավելի նվազ կիրառում կարող էին ունենալ նման տերմինները:



ՆՈՒՇ-ԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԻՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Տեխնիկական զինվածությունը

Հայաստանի ՆՈՒՇ-երում տեխնոլոգիաների կիրառության կամ մեղիակրթության վերաբերյալ խորը հետազոտություններ չեն արվել և դժվար է իրավիճակի ամբողջական պատկերը հասկանալ: Պետական ՆՈՒՇ-երի տեխնիկական զինվածության տվյալներ հնարավոր չեղավ ստանալ ԿԳՄՄՆ-ից կամ ԿՏԱԿ-ից, որը տիրապետում է դպրոցների իրավիճակին, սակայն առայժմ չի ստանում ամփոփ տվյալներ ՆՈՒՇ-երից: Երևանի քաղաքապետարանի տվյալներով մայրաքաղաքի 161 գործող պետական մանկապարտեզներն ունեն հիմնականում մեկական համակարգիչներ, որոնք մեծ մասով կիրառվում են վարչական նպատակներով: Միայն մի քանիսում կան պրոյեկտորներ և ոչ մեկում չկան թվային էկրաններ: Մարզապետարանների տվյալներով, օրինակ, Սյունիքում գործող 49, Լոռիում գործող 68, Շիրակում գործող 53, Տավուշում գործող 52 պետական նախադպրոցական հաստատությունների մի մասում կա համակարգիչ կամ պրոյեկտոր:

Էկրաններով են զինվել 300-ից ավելի նախակրթարանները, որ ստեղծվել են Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» երեք վարկային ծրագրերի շրջանակներում՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից 2008-2017 թվականներին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում իրականացված նախադպրոցական կրթության միկրոծրագրերով (ՀՔՀԱԿ, 2018):

2011-2015թթ. Բեյքեր Թիլլի Արմենիա ընկերությունը կատարել է նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների վերլուծություն:


Ըստ արված վերլուծության՝ նախակրթարաններում առկա էկրանները միշտ չէ, որ կիրառվում են, կամ նպատակային են կիրառվում. դրանց կիրառության մանրամասները և մեթոդական հարցերը վերլուծությունից դուրս են մնացել: Շեշտվում է նաև, որ նախակրթարանները հագեցած չեն դիդակտիկ և գննական նյութերով, առաջարկվում է համալրել հետևյալ նյութերը՝ գիրք, տեխնիկա, սպորտային գույք, խաղալիք:

ԾԻԳ-ի չորրորդ միջանկյալ հաշվետվության մեջ հիշատակվում է, օրինակ, Վանաձորի թիվ 30 մանկապարտեզը, որտեղ դաստիարակը ցուցադրություններ է կազմակերպում հեռուստացույցով և սմարթ էկրանով՝ երեխայի իմացական հմտությունները զարգացնելու համար, սակայն հաշվետվությունը չի մանրամասնում ցուցադրությունների բնույթը, արդյոք դրանց հաջորդում է խաղ, քննարկում (Կրթական ծրագրերի կենտրոն, 2019):

Իսկ օրինակ Գլաձոր համայնքի մանկապարտեզում, թեև կա հեռուստացույց, բայց չի օգտագործվում թույլ ինտերնետ կապի պատճառով: Ինչպես նշված է հաշվետվության մեջ. «դաստիարակը նշել է, որ վերապատրաստման ընթացքում իրենց ասել են, որ հեռուստացույցին այնքան էլ կարևորություն չտան, քանի որ միևնույնն է, երեխաները տանը օգտագործում են այն: Դաստիարակը հարցազրույցի ժամանակ նշել էր, որ ուսումնական պարագաների պակաս ունեն, օրինակ՝ խաղաքարտեր, պաստառներ տարբեր թեմաների վերաբերյալ»:

ՀՀ նախադպրոցական հաստատությունների տեխնոլոգիական զինվածությունը և մանկավարժների պատկերացումները հասկանալու համար մեր անցկացրած առցանց


հարցման տվյալներով 156 մասնակիցների երկու երրորդից ավելին նշում է, որ իրենց հաստատություններում թվային գործիքներ (էկրան, համակարգիչ, հեռախոս, պլանշետ) չի օգտագործվում. մասնակիցների գերակշիռ մասը (86.5%) պետական հաստատություններ են ներկայացնում:



ՆՈՒՀ-երի մոտեցումներն ու դաստիարակների պատկերացումները

Առցանց հարցումն օգնում է նաև ընդհանուր պատկերացում կազմել մանկավարժների մոտեցումների մասին: 156 մասնագետների (բոլորը կանայք), մեծ մասը կարծում է, որ երեխաները թվային գործիքներից պիտի օգտվեն ծնողների կամ դասավանդողների հսկողությամբ (84%): 32%-ը կարծում է, որ տեխնոլոգիան կրթության ու զարգացման նոր հնարավորություն է, իսկ 38%-ը համարում է, որ թվային գործիքները կախվածություն են առաջացնում:

Հատկանշական է, որ ավելի թիրախային հարցին՝ պե՞տք է թվային գործիքները կիրառվեն նախադպրոցական կրթության մեջ, մասնակիցների մոտ կեսը պատասխանել է, որ կարելի է կիրառել միայն ավագ խմբում:



Մեղիա գործիքների կիրառությանը դեմ արտահայտված մասնակիցները հիմնականում մի քանի պատճառներ են նշում, ինչպես օրինակ դրանց բացասական ազդեցությունը երեխայի զարգացման, տեսողության, ընդհանրապես՝ առողջության վրա, առաջացնում է կախվածություն, ինչպես նաև այն հիմնավորմամբ, որ թվային գործիքներն ամենուր են, ինչու երեխաներին ՆՈՒՀ-երում ևս դրանց ազդեցության մեջ պետք է փոխարենը սոցիալական շփման, խաղերի հնարավորություն տալն է ճիշտ:

Հակառակ կարծիք ունեցողներն էլ պնդում են, որ թվային գործիքների գրագետ, սահմանափակ կիրառությունը կարող է օգնել կրթական նյութի ավելի ընկալելի ու պատկերավոր լինելուն: Մասնակիցները կարծում են, որ դրանք երեխաների մոտ զարգացնում են ստեղծագործականությունը և երևակայությունը (43%), աշխարհընկա-




լումը (60%), լեզուն (52%), սովորելու կարողությունը (42%):

Թվային գործիքների կիրառության նախընտրելի տեսակների հարցում մասնակիցների կարծիքները հիմնական համընկնում են մեծ մասը դրանք դիտարկում է կամ թվային կրթական խաղերի (76%) և մուլտերի/ֆիլմերի ցուցադրության (58%) կամ երգերի ու սուցանման (34%) միջոցով:

Թվային գործիքների կիրառությամբ ո՞րն է ավելի նախընտրելի զբաղմունք մինչև 6 տարեկան երեխայի համար : (Նշե՛ք առավել նախընտրելի 2 պատասխանները):

156 responses



Մեդիա գործիքների հնարավոր բացասական ազդեցության մասով, մասնակիցները չափազանց մեծ կարևորություն են տվել վտանգավոր բովանդակությանը (բռնություն, պոռնոգրաֆիա) և խաբեությանը, անձանոթների հետ շփմանը: Ավելի չափավոր կարևորություն է տրված էկրանի առաջ անցկացրած ժամանակին, գովազդի ազդեցությանը, ինչպես նաև մուլտերի, ֆիլմերի և այլնի՝ երեխաների աշխարհընկալման վրա ունեցած ազդեցությանը:

Հետաքրքրական է, որ մասնակիցների մեծ մասը մեդիագրագիտության առանցքային մաս կազմող հետևյալ պնդումները ավելի շատ նույնացնում են համացանցում ապահով լինելու, սոցիալական ցանցերում գրագետ բովանդակություն տարածելու կամ կեղծ լուրերը տարբերելու և ստուգելու հետ:

Այս ամենով հանդերձ, հարցմանը մասնակիցների մեծ մասը (60%-ից ավելին) կարծում է, որ մեդիագրագիտության միջոցով տրվող հմտությունների (քննադատական մտածողության զարգացում, մեդիամանիպուլյացիաներից խուսափում, գովազդի ու լրատվության տարբերելը, կասկածելի տեղեկությունների ստուգելն ու համեմատելը) կարիք չունեն մինչև 6 տարեկան երեխաները:

Վերջապես հարցվածների կեսից ավելին (61%) նշել է, որ ծնողների հետ հանդիպումներում քննարկել է երեխայի կախվածությունը էկրանից և մուլտերի կամ ֆիլմերի ազդեցությունը երեխաների վրա:

Մեդիա գործիքների կիրառությունը և մեդիագրագիտությունը մանկապարտեզում դաստիարակների հետ քննարկվել է նաև առցանց ֆոկուս խմբի ձևաչափով: Քննարկման 11 մասնակիցները թե պետական, թե մասնավոր/հեղինակային մանկապարտեզների մասնագետներ էին: Առցանց քննարկումը նորից ապացուցեց, որ պետական մանկապարտեզները չունեն անհրաժեշտ գործիքներ, չունեն վերապատրաստված մասնագետներ, ռեսուրսներ, նաև կարիք ունեն մեթոդաբանության՝ մեդիան երեխաների հետ աշխատանքում ներդնելու համար՝ որպես գործիք, թե որպես թեման:



Քննարկման մասնակիցներից մի քանիսը նշեցին, որ հնարավորության դեպքում օգտագործում են էկրան կամ պրոյեկտոր՝ երեխաներին դիդակտիկ, կրթական, երբեմն ժամանցային տեսանյութեր ցույց տալու համար: Եւ նրանք այստեղ են տեսնում մեդիայի հիմնական դերը: Իտալական Ռեջիո մեթոդաբանությամբ զբաղվող Միլվա Սարդարյանը օրինակ բերեց պոյնտորով ստորջրյա միջավայր ստանալու հնարավորությունը, թե ինչպես թվային տեխնոլոգիան կարող է օգնել երեխային զգալ իրեն ուրիշ միջավայրում: Նաև առաջարկեց լուսանկարել և վավերագրել երեխաների գործունեությունը, ապա դրանք ուսումնասիրելով միասին անդրադառնալ արվածին ու վերլուծել:

Փառանձեմ Խանգելոյանը Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզի մասնագետ է, «Քայլ առ քայլ» հիմնադրամի վերապատրաստող, նաև համակարգում է «Ուսուցիչների ուսումնափորձարարական համայնք» ֆեյսբուքյան խումբը: Նրա խոսքով՝ մանկապարտեզում կարելի է պլանշետներ կիրառել՝ կոնկրետ առաջադրանքների, խաղերի համար, բայց չկան գործիքներ ու ծրագրեր: Նրա խոսքով՝ համավարակը նպաստեց, որ դաստիարակներն ու ծնողները նախ իրենք սկսեն ավելի հմուտ կիրառել տեխնոլոգիաները, ապա փորձեն ներդնել մեդիան՝ երեխայի կրթության մեջ: Նոյեմբերյանի թիվ 2 մանկապարտեզը, օրինակ, համավարակի ամիսներին առցանց գործիքներով ծնողներին ու երեխաներին փոխանցել է առաջադրանքներ, հեքիաթներ, երգեր, կարողացել է հեռավար կերպով կազմակերպել ամանօրյա միջոցառում:

Ծնողների հետ կապը, ծնողներին՝ մանկապարտեզի կյանքում ներգրավելը երկրորդ ուղղությունն է, որտեղ, ըստ դաստիարակների, տեխնոլոգիաների կիրառությունը կարող է դրական լինել:

Տեխնոլոգիաների կիրառության և մեդիագրագիտության մոտեցումները ուսումնասիրել ենք նաև Հայաստանում գործող մի քանի հեղինակային, այլընտրանքային մանկապարտեզների օրինակով:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում տեխնոլոգիան կրթության կարևոր բաղադրիչ է՝ նախակրթարանից մինչև ավարտական դասարաններ: Կրթահամալիրի սկզբունքն է կրթությունը բիսեցնել իրական կյանքից, իրական խնդիրների լուծման հմտություններով զինել երեխաներին, ասում է կրթահամալիրի մանկավարժ, «Իմացումի հրճվանք» կրթական լաբորատորիայի մասնագետ Անահիտ Հարությունյանը:

Լաբորատորիան օգնում է դասվարներին տարրական դասարաններում ինտեգրված ուսուցում իրականակցնել՝ ներառելով մեդիակրթությունը: Սակայն Անահիտ Հարությունյանի խոսքով տեխնոլոգիան և մեդիան կիրառվում են նաև նախադպրոցական տարիքում, հիմնականում 5 տարեկանից սկսած: Մինչ այդ՝ 2-4 տարեկանների խմբում, երեխաներն ինքնուրույն չեն օգտագործում գործիքները. ուսուցիչը կամ ծնողը կարող են կիրառել օրինակ տեսախցիկ՝ երեխաների առօրյան, երգը, ներկայացումը տեսագրելու և տարածելու համար, երեխաներին ներկայացնել աուդիո հեքիաթներ, մուլտերից պատատիկներ: Այստեղ բոլոր մանկավարժները ունեն բլոգ, որտեղ պատմում և ցույց են տալիս երեխաների առօրյան, կապ են պահում ծնողների հետ:

5 տարեկանների համար մեկ տարվա ծրագիր է իրականացվում, որտեղ էլ երեխան սկսում է կիրառել պլանշետը որպես գործիք, սովորում է միացնել ու անջատել այն, կատարել պարզ գործողություններ, աշխատել նկարչական ծրագրերով, ասում է Անահիտ Հարությունյանը: 5 տարեկանից սկսած երեխան օգտվում է էլ. փոստից, ուսուցչի վերահսկողությամբ նաև այցելում է կրթահամալիրի կայք, դիտում տեսանյութեր:

«Այս ծրագրի մաս է նաև մեդիա հիգիենան. երեխան սովորում է օրինակ աչքի

վարժություններ անել, աշխատանքը ավարտելուց հետո անջատել համակարգիչը կամ պլանշետը»,- ասում է Անահիտ Հարությունյանը: Նրա խոսքով այս կանոնների մասին խոսում են նաև ծնողների հետ, սակայն թե ինչպես են երեխաները տանը օգտվում գործիքներից, ուսուցիչը քիչ է տեղյակ ու չի կարող վերահսկել, քանի որ դա արդեն ծնողի հայեցողությամբ է արվում:

Մեդիա գործիքների ինտեգրումն ու կիրառությունը նաև մանկավարժական քննարկումների ու վերապատրաստումների մաս է կրթահամալիրում. կայքում կարելի է գտնել ուսուցիչների կողմից մշակված մեթոդական նյութեր, ուսումնասիրություններ, դասի պլաններ:

Այս ամենում մեդիայի կիրառությանն ավելի մեծ տեղ է տրվում, քան մեդիայի բովանդակության ու ազդեցության քննադատական ընկալմանը: «Ամսիկների դերն ու նշանակությունը 5-6 տարեկանների «Բմացումի հրճվանք» կրթական ծրագրում» հոդվածում կրթահամալիրի ուսուցիչներն ու նյութի հեղինակները մեդիագրագիտությունը դիտարկում են համակարգչից վարժ օգտվելու համատեքստում միայն:

Մասնավոր շատ նախադպրոցական հաստատություններ ակտիվորեն կիրառում են էկրանները, ձայնարկիչները:

Լիանա Վերոյանը նախկինում աշխատել է Կրթության ազգային ինստիտուտի նախադպրոցական կրթության բաժնում, այսօր «Հրաշք տնակ» մանկապարտեզի փոխտնօրենն է մեթոդական գծով: Այստեղ օգտագործում է իր փորձը, միջազգային տարբեր մեթոդներ է ներառում կրթության մեջ:

Լիանա Վերոյանը դեմ է պլանշետների կիրառությանը, քանի որ կարծում է՝ դրանք կախվածություն են առաջացնում: Պատմում է, որ իր թոռնիկին դժվարությամբ են կտրում էկրանից. երբեմն, օրինակ տրանսպորտում, ստիպված են լինում հեռախոսը օգտագործել երեխային զբաղեցնելու համար, սակայն հետո անջատելը դառնում է «մեծ պատմություն»:

Մանկապարտեզում բոլոր սենյակներում ունեն հեռուստաէկրաններ, դրանցով հիմնականում նվազարկիչով մուլտեր ու հեքիաթներ են դիտում, նաև երաժշտություն են միացնում պարապմունքների ժամանակ: Մտորային խմբում երեխաները հերթով են սնվում՝ դաստիարակների օգնությամբ, իսկ սպասողները մուլտ են դիտում, որ գործընթացը համակարգված լինի ու չխանգարվի, ինչպես բացատրեց փոխտնօրենը:

Լիանա Վերոյանի խոսքով, մանկապարտեզի մասնագետները մասնակցել են Մանկավարժական համալսարանի անցկացրած մեդիակրթության վերապատրաստմանը, սակայն կարծում է, որ իրենց մանկապարտեզի գրաֆիկում տեղ չկա լրացուցիչ մեդիա պարապմունքներ ինտեգրելու համար. նրա պատկերացմամբ, մեդիակրթության համար առանձին ժամ ու պարապմունք պետք է հատկացնեն:

Մրան հակադիր, Երևանում և Դիլիջանում գործում են վալդորֆյան մեթոդաբանությամբ առաջնորդվող մանկապարտեզներ (Դեղին Արտույտ, Խորամանկապարտեզ), որոնք կտրականապես մերժում են թվային տեխնոլոգիաների կիրառությունը նախադպրոցական տարիքում, համոզված են, որ երեխան պիտի բացահայտի իրեն շրջապատող բնական միջավայրը, շարժման մեջ լինի, ֆիզիկական շփում ունենա, իսկ տեխնոլոգիան խանգարում է դրան:

Փոխարենը, վալդորֆյան մոտեցմանը հետևող Երևանում գործող «Խորամանկապարտեզում» օրինակ, այս ձևաչափում ավագ խմբում (4-5տ) բեմադրել էին Թումանյանի «Ճստիկ ճուտիկը»՝ ըստ դաստիարակ Հասմիկ Խաչատրյանի, դա հենց կեղծ տեղեկությունների շղթան ցույց տվող պատմություն է: Երեխան հեքիաթը բեմադրելով, այդ մասին խոսելով սկսում է հասկանալ, որ ամեն ասածի պետք չէ հավատալ, տեսնում



է, որ ամեն ինչին հավատալը կարող է հանգեցնել նրան, որ աղվեսը ուտի ճուտիկին և մյուս կենդանիներին:

Քննադատական, վերլուծական միտքը խթանելու համար հեքիաթները կիրառում են և պետական և մասնավոր կամ այլընտրանքային մանկապարտեզներում: Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի մասնագետի խոսքով իրենք ևս փոքր տարիքից սովորեցնում են երեխաներին իրենց կարծիքն ասել, քննարկել հեքիաթները, նաև «մեղադրել» ու «պաշտպանել» հերոսներին:

Հոգեբան Անուշ Ալեքսանյանը նույնպես խրախուսում է հեքիաթների կիրառությունը մանկապարտեզում՝ երեխայի քննադատական միտքը զարգացնելու համար. «Հեքիաթը մեծերի կյանքի մանկականացված տարբերակն է, տալիս է երեխաներին այն փորձը, որը իրենք չեն ապրել, բայց մեծերը ապրել են, գիտեն», - ասում է նա՝ օրինակ բերելով Կարմիր Գլխարկը, որը սովորեցնում է երեխային չվատահել անձանոթին, չգնալ մութ անտառ և այլն:

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախադպրոցական կրթության մեջ մեդիակրթության ներդրման ամենակարևոր նախապայմաններից մեկը տեղյակ ու պատրաստված մասնագետներ, մանկավարժներ ունենալն է: Սրա պակասը արձանագրում են ամենաառաջադեմ երկրները, ինչպիսին են Տիւրքիան, ԱՄՆ և ուրիշներ:

«Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (ՀՊՄՀ) սկզբնական կրթության ֆակուլտետում սովորող ուսանողները՝ ապագա մանկավարժները, ուսումնառության ընթացքում մի քանի դասընթաց են անցնում մեդիակրթության վերաբերյալ, սովորում են կիրառել գործիքները սկզբնական կրթության, մասնավորապես տարրական դասարանների մանկավարժության մեջ, նաև անիմացիոն հմտություններ են զարգացնում, ըստ ֆակուլտետի դեկան Հերմինե Խաչատրյանի: Մանկավարժության ֆակուլտետի դասախոս Արմինե Մանուկյանը 2017-ին հրապարակել է «Մեդիակրթություն» ուսումնամեթոդական ձեռնարկը, որով էլ անցկացվում են մանկավարժների դասերը. ձեռնարկը հիմնականում կենտրոնանում է տեխնոլոգիաների կիրառության վրա՝ դպրոցական կրթության համատեքստում: Իսկ 2019-ին լույս է տեսել «Մեդիակրթությունը տարրական դպրոցում» ուսումնամեթոդական ձեռնարկը, որը նաև սահմանում է մանկավարժի ու աշակերտի մեդիակոմպետենցիաները. դրանց համաձայն տարրական դպրոցի մանկավարժը գիտակցում է մեդիայի դերն ու ազդեցությունը, կարողանում է ստեղծել միջավայր, որտեղ աշակերտը կզարգացնի մեդիակրող և ստեղծագործող լինելու հմտություններ, կիրառում է մեդիան դասարանական և արտադասարանական պարապմունքների ժամանակ:

Համալսարանի «Նախադպրոցական մանկավարժություն» դասագիրքը, օրինակ, առանձին բաժին չունի մեդիայի կամ տեխնոլոգիաների կիրառության մասին, սակայն նշում է զարգացնող միջավայրի ձևավորման կարևորությունը, որի մաս են ուսուցողական տեսաֆիլմերը (Նախադպրոցական մանկավարժություն, 2008, էջ 65):

Դասագիրքը շեշտում է որ դաստիարակության գլխավոր խնդիրը հասարակության «ի պատկերի յուրում» վերարտադրության ապահովումն է, այսինքն՝ ժամանակին և հասարակությանը հարմար հասարակության անդամների, քաղաքացիների

ձևավորումը», ապա մանրամասնում, որ ժողովրդավարական հասարակությունում այդ քաղաքացիները պիտի լինեն ազատ, ինքնուրույն մտածող, կողմնորոշվող և ընտրության ընդունակ:

Դասագրքի տարբեր դրվագներում խոսվում է երեխային կարծիք ու դիրքորոշում արտահայտելու հնարավորություն տալու մասին, խրախուսվում է երեխայի հետ քննարկել հեքիաթներն ու պատմությունները, զարգացնել նրանց ստեղծագործականությունը, դերային խաղերը (Նախադպրոցական մանկավարժություն, 2008, էջ 65):

2016-2019 թվականներին ՀՊՄՀ-ում «Կրթության բարելավում» վարկային ծրագիրն է իրականացվել, որի մաս է կազմել «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը: Ծրագրի շրջանակում Սկզբնական կրթության ֆակուլտետում հիմնվել է մուլտիմեդիա լաբորատորիա և հետազոտական լսարաններ, ստեղծվել և գործարկվել է INNOSTUD.AM թվային հարթակը՝ նախադպրոցական և տարրական դասարանների ուսուցիչների համար, որտեղ նրանք ստեղծում և օգտագործում են խաղային ռեսուրսներ, օգտվում էլեկտրոնային գրադարանից, որը պարունակում է մեծավ մասամբ ռուսալեզու մանկավարժական գրականություն:

Այս ամենը վերապատրաստումների միջոցով փոխանցվում է տարրական դպրոցի և մանկապարտեզների ուսուցիչներին (Ամփոփիչ մշտադիտարկում ՀՊՄՀ-ում, 2019):

Վերապատրաստումներին սակայն բոլոր մասնագետները չէ, որ մասնակցում են: Այս հետազոտության առցանց հարցման մասնակիցների միայն 30%-ն է նշել, որ մասնակցել է մեդիա կրթության կամ մեդիագրագիտության վերապատրաստումների, և մասնակցածների մեծ մասը կարծում է դրանց արդյունքում սկսել են ավելի ակտիվորեն կիրառել մեդիա գործիքները և նոր ռեսուրսներ են բացահայտել իրենց համար: Հատկանշական է, որ ամենաշատ նախադպրոցական կրթական հաստատություն (161 պետական մանկապարտեզներ) ունեցող համայնքում՝ Երևան քաղաքում, քաղաքապետարանի փորձագետի հավաստմամբ մեդիակրթության վերապատրաստումներ չեն եղել: Նման պատկեր է նաև մարզերում:

2021թ. փետրվար-մարտ ամիսներին նախադպրոցական հաստատությունների մանկավարժների համար առցանց վերապատրաստումներ է իրականացրել Հանրային լրագրության ակումբը, որոնք վարել է մեդիագրագիտությանամերիկացի մասնագետ Շերիի Քուլվերը և մասնակցել են ավելի քան 100 ՆՈՒՀ մանկավարժներ ամբողջ Հայաստանից (ՀԼԱ, 2021):

ՀՊՄՀ սկզբնական կրթության Ֆակուլտետի դեկանի տեղակալ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լուսինե Պողոսյանը ուսումնասիրել է սկզբնական կրթության մեջ տեխնոլոգիաների և մեդիայի ներդրումը: Նրա կարծիքով տեխնոլոգիան կարող է դրական ազդել նախադպրոցական կրթության վրա. «Դաստիարակը կարող է երեխաներին ուղղորդել դեպի դրանց օգտակար կիրառություն, սովորեցնել օգտագործել տեխնոլոգիան ըստ նպատակի: ՏՏ-ն օգտակար է, երբ ծնողը կամ դաստիարակը զբաղվում են երեխայի հետ, միասին ինչ-որ բան են անում»:

Նրա խոսքով՝ Innostud.am-ի մուլտիմեդիա ռեսուրսները լավ օրինակ են, թե ինչպես կարելի է նպատակային օգտագործել տեխնոլոգիան, դրանց միջոցով զարգացնել երեխայի՝ օրինակ խոսքային հմտությունները, տրամաբանությունը, գույնի, չափի ընկալումը...

Ընդհանրապես անվտանգ և ապահով միջավայրը մեծ տեղ և նշանակություն ունի Նախադպրոցական կրթական չափորոշիչներում (ուրոտներից մեկը կոչվում է Ինքնասպասարկում, առողջության պահպանում և անվտանգություն), Ծրագրերում, կան հրապարակված տարբեր ձեռնարկներ և ուղեցույցներ: Ծրագրերում առանձին տեղ է հատկացված անվտանգ վարքագծի և տարբեր արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի ձևավորմանը: Անվտանգ վարքագիծը ներառում է երթևեկության կանոններին ծանոթանալը, տարբեր սարքավորումներից օգտվելու տեղեկացվածությանը և այլն:

Առցանց միջավայրում երեխաների խոցելիության հավանականությունը շատ մեծ է նրանով, որ չերևացող վտանգներ է պարունակում:

ՄԻՊ աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Իվետա Շահբազյանի խոսքով իրենք ստացել են ծնողներից ահազանգեր երեխաների նկարների կամ տեսանյութերի տարածման կամ թվային տիրույթում բուլինգի (այս վերջինը դպրոցահասակ երեխաների դեպքում) դեպքերի վերաբերյալ: Մասնագետը նշում է, որ դրանք մեծ թիվ չեն կազմում, բայց հիմնական խնդիրը իրազեկված չլինելու մեջ է, որ չգիտեն իրենց կամ երեխաների իրավունքների մասին:

ՄԻՊ գրասենյակը երեխաների իրավունքների հետ կապված մի քանի ձեռնարկներ է հրապարակել, ինչպես լրագրողների համար («Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը, 2018»), այնպես էլ դպրոցի ուսուցիչների համար («Եկեք սովորենք երեխայի իրավունքները»): Նաև թվային անվտանգության Կասպերսկի լաբորատորիայի հետ համատեղ հրապարակել է հայերեն ձեռնարկներ և նյութեր (Կուդինով, 2016):

Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար ուղեցույցը 2018թ-ին առաջինը հայերեն է թարգմանվել: Այս ամենով հանդերձ, մասնագետն ընդունում է, որ նաև նախադպրոցական կրթության մեջ առավել ուշադրություն է պետք դարձնել թվային տիրույթում երեխաների իրավունքների պաշտպանությանը, մեդիագրագիտության միջոցով դասավանդողներին ու ծնողներին առավել իրազեկված դարձնելուն:

ՄԻՊ աշխատակցի խոսքով, երեխաների նկարներ և տեսանյութեր տարածելիս նույնիսկ լավ կլինեք, որ երեխան էլ մասնակից լինեք իր իսկ վիդեո նյութի կամ նկարների հանրայնացման գործընթացին, ինքն էլ ունենար ընտրելու հնարավորություն, իրեն դուր եկած նյութն օգտագործվեր: Եթե հնարավոր չէ երեխայի կարծիքը հաշվի առնել ընտրության մեջ, ապա գոնե հստակ բացատրվի իրեն, թե ինչու է այդպես արվում:

Այս հետազոտության շրջանակում արված առցանց հարցման մասնակիցների 60%-ը պատասխանել է, որ համացանցում ՆՈՒՀ-ի սաների նկարներ և տեսանյութեր է տարածում և տարածողների գերակշռող մասը (մոտ 95%) դա անում է ծնողի թույլտվությամբ:

Հետաքրքրական է, որ հարցվածների մոտ կեսը (49%) համացանցում երեխայի մասին տեղեկություններ, նկարներ ու տեսանյութ տարածելը համարում է ապահով, քանի որ ծնողներն ու դաստիարակները լավ գիտեն երեխաների վերաբերյալ երբ և ինչ տարածեն, և միայն 16%-ն է կարծում, որ երեխայի մասին տվյալները տարածելով ուրիշները կարող են վնասել նրանց:





Մասնավոր մանկապարտեզներից մեկի փոխսնօրենը, մեզ հետ զրույցում ասաց, որ օգտագործում են Ֆեյսբուքը՝ ծնողների հետ կապը պահելու, նաև ունի հանրային ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվում են երեխաների առօրյայից լուսանկարներ և տեսանյութեր: Փոխսնօրենի խոսքով՝ ծնողներից թույլտվություն հարցնելու խնդիր չի առաջացել մինչև այժմ: Բացի դրանից, տեսախցիկներ են տեղադրված բոլոր խաղա/դասասանյակներում և տնօրենը կարողանում է հետևել օրվա ընթացքին, ցանկության դեպքում, ծնողները նույնպես կարող են:

Համավարակի շրջանում ավելի ակնառու դարձավ առցանց անվտանգության խնդիրը, երբ հիմնականում դպրոցները, բայց նաև մանկապարտեզները ավելի ինտենսիվորեն սկսեցին կիրառել տեխնոլոգիաները, իսկ տանը փակված ընտանիքներում տեխնոլոգիան դարձավ հիմնական զբաղմունք: Եվրոպայի խորհրդի Թվային քաղաքացիության կրթության 2020 թ-ի հետազոտության արդյունքներով, որին 38 երկրներից 20.000-ից ավելի ծնողներ են մասնակցել (1397 ծնողներ Հայաստանից), ավելի է ընդգծվում ծնողների դերն ու նշանակությունը երեխաների՝ առցանց տիրույթում անվտանգ նավարկելու հարցում (Richardson, 2020):

Այսպես, հարցման համաձայն հայաստանցի ծնողների մեծ մասը (76%) հաճախակի կամ երբեմն ստուգել են երեխաների օգտագործած օնլայն հարթակները, թվային գործիքները:

Անվտանգությանը վերաբերող խնդիրների մեկ այլ խմբի, տարբեր երկրներից հարցմանը մասնակցած ծնողների մեծ մասը (ամեն 10-ից 9-ը, նաև Հայաստանում) ասել են, որ երեխաները դիմել են, խոսել են իրենց հետ տարօրինակ կամ անվտանգային սպառնալիք պարունակող բովանդակության հանդիպելու դեպքում (Richardson, 2020):

Թվային անվտանգության փորձագետ Արթուր Պապյանի խոսքով երեխաների անձնական տվյալների արտահոսքը ամենալուրջ խնդիրներից մեկն է սա վերաբերում է թե խաղային հավելվածների կողմից օգտվող երեխայի տվյալների կորզում, թե հենց մանկապարտեզների թվային հարթակներից կամ բազաներից տվյալների արտահոսք, թե ծնողների կողմից տարածվող տվյալներ և տեղեկություններ: Նրա խոսքով՝ այս խնդիրը պիտի լինի դաստիարակների, ծնողների կրթության մաս:

ՄԻՊ-ը, ՅՈՒՆԻՄԵՏ-ը և տարբեր կազմակերպություններ պարբերաբար անդրադառնում են խնդրին: Անվտանգ համացանցի միջազգային օրը (փետրվարի 11) Յունիսեֆը հրապարակել է 5 ամենաառանցքային կետերի վերաբերյալ խորհուրդներ՝ ծնողների համար՝ ինչպես ապահովել երեխաների անվտանգությունը համացանցում՝ սկսած երեխաների հետ անկեղծ զրույցներից ու նրանց հետ միասին համացանցում անցկացնելուց մինչև ապահով տեխնոլոգիաների ապահովումը (ՅՈՒՆԻՄԵՏ, 2021):

**ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ
ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ**

Այն, որ նախադպրոցական տարիքի երեխաները տանն օգտվում են թվային մեդիայից, ընդունում են փորձագետներն ու դաստիարակները, թեև չկա Հայաստանում արված հետազոտություն այս մասին: Հայաստանցի մասնագետների հետ թե առանձին խորը հարցազրույցների, թե առցանց ընդհանուր քննարկման ժամանակ, տարբեր մոտեցումներ ու առաջնահերթություններ են բարձրաձայնվել: Ոմանք կարծում են, որ երեխաներին որքան հնարավոր է, պետք է հեռու պահել թվային տեխնոլոգիաներից ու



որևէ կերպ չինտեգրել դրանք նախադպրոցական կրթության մեջ: Կա նաև կարծիք, որ այսօրվա մանկավարժությունն առանց դրանց հնարավոր չէ: Կարևորելով թվային միջավայրի վտանգներից երեխաներին պաշտպանելը (անձնական տվյալների արտահոսքից մինչև երեխայի հոգեբանության ու ֆիզիկական առողջության վրա բացասական ազդեցություն), կրթության ու մեդիայի մասնագետների մի մասը ընդունում է, որ անհրաժեշտ է զարգացնել երեխաների՝ մեդիայից ճիշտ օգտվելու հմտությունները: **Գրեթե բոլոր մասնագետները կարծում են, որ երեխաներին պաշտպանելու, նրանց մեդիա սպառումը կանոնակարգելու և բարելավելու համար առաջնային է ծնողների ու դաստիարակների շարունակական կրթությունը:**

«Քայլ առ քայլ» հիմնադրամի վերապատրաստումների առաջատար մասնագետ Աշխեն Գյուրջյանն, օրինակ, առաջարկում է պոլիկլինիկաների միջոցով ծնողներին տեղեկացնել էկրանի առաջ երկար նստելու վտանգների մասին, իսկ Արեգնազան կրթահամալիրի ուսուցիչ և Վալդորֆյան մանկավարժության փորձագետ Արա Աթայանը կարծում է՝ **ծնողներին ուղղված լայն տեղեկատվական արշավ է պետք՝ երեխաների վրա մեդիայի բացասական ազդեցության ու վտանգների մասին:** Նրա կարծիքով՝ երեխաներին առնվազն մինչև 11 տարեկան պետք է հեռու պահել թվային տեխնոլոգիաներից, ինչը, նրա խոսքով, ամենևին չի խանգարում, որ երեխան հետագայում արդյունավետորեն օգտագործի տեխնոլոգիաները և նույնիսկ զբաղվի ծրագրավորմամբ:

«Համավարակի ընթացքում նույնիսկ խորհուրդ էր տրվում օգտվել մեդիա գործիքներից՝ ընկերների ու հարազատների հետ կապը պահելու համար, տանը փակված զբաղմունք ունենալու համար: Նաև խորհուրդ էր տրվում էկրանը օգտագործել ֆիզիկական ակտիվության համար՝ հատկապես նախադպրոցական տարիքում երեխան սովորում է խաղի միջոցով, իսկ խաղի համար նա պիտի շարժվի: Բազմաթիվ հետազոտություններ կան այն մասին, թե սակավաշարժությունը ինչ խնդիրների է բերում: Իսկ մենք այսօր տեսնում ենք երկու տարեկան երեխաներ, որ գամված են էկրանին, և մեծանում են՝ ունենալով շփման խնդիր», - ասում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Վաղ մանկության զարգացման ծրագրերի համակարգող Մայա Միմոնյանը:

Մեդիա փորձագետ, «Արեգնազան» կրթահամալիրի ուսուցիչ Սամվել Մարտիրոսյանը կարծում է, որ **նախադպրոցական տարիքում երեխան միայն մեծահասակի ընտրությամբ շատ կարճ բովանդակություն պիտի սպառի էկրանից.** եթե հեռախոսը, պլանշետը երեխայի ձեռքին է, արդեն դժվար է վերահսկել գործողությունները, նույն ՅուՅուբում երեխան պատահաբար կարող է հանդիպել բացասական բովանդակության:

Մխիթար Մեբաստացի կրթահամալիրի քոլեջի մանկավարժության դասախոս Գայանե Թերզյանն առաջարկում է շեշտը դնել երեխայի հաղորդակցական, ստեղծագործական, վերլուծական հմտությունների զարգացման վրա, որոնք կդառնան մեդիագրագիտության հիմքը: Նրա հեղինակած «Խոսք և հաղորդակցություն» ձեռնարկները օգնում են ուսուցչին զարգացնել երեխայի հաղորդակցական հմտությունները՝ այդ թվում քննարկելով տեղեկատվության աղբյուրը, հաղորդակցության տեսակներն ու միջոցները, նպատակներն ու հնարքները, տեքստերի ասելիքը հասկանալը...

ՀՊՄՀ սկզբնական կրթության Ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը վստահ է, որ տեխնոլոգիան այսօրվա միջավայրի մաս է, որում ապրում է երեխան, ուրե՛մ պիտի ճանաչի այդ միջավայրը, բայց թվային մեդիան պիտի կիրառվի մանկապարտեզում միայն այն ժամանակ, երբ ֆիզիկական միջավայրում հնարավոր չէ ցույց տալ, հասկանալ որևէ թեմա կամ երևույթ: «Օրինակ՝ տարվա եղանակների մասին խոսելիս

դաստիարակը կարող է դրսում ցույց տալ ձմեռը, իսկ մյուս եղանակների մասին պատկերներ ցույց տալ էկրանին», - ասում է Հեղինե Խաչատրյանը:

Թվային անվտանգության մասնագետ Արթուր Պապյանը վստահ է, որ տեխնոլոգիան պիտի լինի վաղ տարիքի կրթության մաս, քանի որ դա այս դարի գործիքն է:

«Կար ժամանակ, որ թուղթն էլ չէին հայտնաբերել, քարերի վրա էին նկարում գուցե, հիմա թղթի փոխարեն պլանշետի վրա թող նկարեն, ի՞նչն է խնդիրը», - ասում է Արթուր Պապյանը, որ իր երկու տղաների օրինակով համոզվել է, որ արգելել մեդիայից օգտվելը սխալ ճանապարհ է. տղաները 5-6 տարեկանից սկսած կարողանում էին շրջանցել արգելքները: Ավելի լավ է երեխային օգնել ավելի գրագետ կիրառել գործիքները, սովորեցնել նրան ստեղծագործել դրանց միջոցով, և դա պետք է սկսել հենց այն տարիքից, երբ երեխային ծնողը թույլ է տալիս որևէ բան դիտել էկրանով: Բայց շեշտում է, որ տեխնոլոգիան չպիտի դառնա «ծծակի պես» երեխային հանգստացնելու, պասիվ պահելու միջոց:

Մինևույն ժամանակ Արթուր Պապյանը շեշտում է, որ խաղեր, սոցցանցեր, թվային բովանդակություն ստեղծող ընկերությունները կիրառում են հոգեբանական ազդեցության մեխանիզմներ՝ մարդուն էկրանի առաջ պահելու համար. երեխաների վրա այդ մեթոդները ավելի մեծ ազդեցություն ունեն: Առաջին հերթին ծնողներն ու մանկավարժները պիտի տեղյակ լինեն, որ կարողանան պաշտպանել երեխաներին:

Հոգեբան Անուշ Ալեքսանյանն հանդիպել է ընտանիքների, որտեղ էկրանի առջև անցկացրած երկար ժամանակը հանգեցրել է երեխայի խոսքի հասպտման, գիշերային անքնության, սոցիալական վարքի փոփոխության: Նրա կարծիքով, դա հիմնականում պասիվ սպառողի դերում լինելու պատճառով է, իսկ երեխան բնական շփման, ինտերակտիվության կարիք ունի:

Նույն մտահոգությունն ունի հոգեբան Վարսի Սենեքերիմյանը, որը պնդում է, որ նախադպրոցական տարիքում երեխան իրական շփման ու իրական հույզերի կարիք ունի: Տեխնոլոգիայից պիտի գրագետ կարողանան օգտվել ծնողներն ու դաստիարակները՝ երեխաներին փոխանցվող նյութը ավելի հետաքրքիր դարձնելու համար, բայց ոչ երեխաներին էկրանների առաջ մենակ թողնելով:

Անուշ Ալեքսանյանը կարծում է, որ երեխային պետք է սովորեցնել թվային աշխարհի կանոնները, բացատրել, որ օրինակ համացանցում դրված նկարը տեսանելի է բոլորին, որ համացանցում ցանկացած մարդ բովանդակություն է տարածում ու ոչ միշտ է այդ բովանդակությունը բարի ու ճշմարիտ:

Հոգեբանները, երեխայի զարգացման և կրթության մասնագետները նշում են, որ նախադպրոցական տարիքում երեխան պատկերային մտածողություն ունի, սովորում է կրկնօրինակելով, ու նորից շեշտվում է ծնողների դերը. նրանց կրթելը ու նրանց օրինակով երեխաներին գրագետ մեդիա սպառում սովորեցնելը:

Ծնողների հետ դաստիարակների աշխատանքը մանկավարժի կոմպետենցիաներից ամենակարևորն է, ասում է սկզբնական կրթության մասնագետ Լուսինե Պողոսյանը: Նրա խոսքով այսօրվա դաստիարակներն ու ծնողներն իրենք կարիք ունեն զարգացնելու իրենց քննադատական մտածողությունը, հասկանալ, թե ինչպես պետք է աշխատել ինֆորմացիայի աղբյուրների հետ:

Լուսինե Պողոսյանի կարծիքով՝ մեդիակրթության ու մեդիաանվտանգության ռազմավարություն է պետք, որ հաշվի կառնի ոչ միայն տեխնոլոգիայից օգտվելու երեխայի իրավունքները, այլ նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության, բժիշկների ու հոգեբանների ցուցումները, խորհուրդները, սահմանափակումները:

ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխաները ժամանակակից աշխարհում գնալով ավելի ու ավելի շատ են օգտվում թվային մեդիայից, իջնում է մեդիա սպառողների տարիքային շեմը, չնայած, որ մասնագետները, բժիշկները չեն խրախուսում էկրանների կիրառությունը շատ վաղ տարիքում՝ մատնանշելով դրա վտանգները՝ խոսքի և զարգացման հասպաղում, ֆիզիկական պասիվություն, քնի խանգարում:

Միջազգային հետազոտությունները փաստում են, որ տեխնոլոգիան տանը հիմնականում օգտագործվում է երեխային զբաղեցնելու համար՝ պասիվ սպառման միջոցով: Մյուս կողմից, դպրոց ու մանկապարտեզ բերելը դրական ազդեցություն է ունենում. մանկապարտեզում երեխան մենակ չի մնում էկրանի առջև, չի լինում պասիվ սպառող, այստեղ մեդիան կիրառվում է երեխայի զարգացման այս կամ այն խնդիրը լուծելու համար, այդ կիրառությունը լինում է թիրախային, ակտիվ, մեծահասակի մասնակցությամբ և ուղղորդմամբ, սովորեցնում է երեխային մեդիա հիգիենայի կանոնները, նաև նպատակաուղղված է մեդիայի ասելիքն ու ազդեցությունը հասկանալուն:

Նախադպրոցական տարիքում մեդիագրագիտության մասին խոսելիս մասնագետները մեդիայի շատ լայն ընկալում են առաջարկում՝ առաջնություն տալով գրքին, թերթին, թատրոնին, ավանդական լուսանկարներին, աուդիոհեքիաթներին ու երգերին: Հեքիաթն ու խաղը այս տարիքում կրթության հիմնական մեթոդն են. ծնողի ու մանկավարժի դերը հաճախ միջավայր ու իրավիճակ ձևավորելն է, որտեղ երեխաները կզարգացնեն համագործակցային, հաղորդակցական հմտությունները, կստեղծագործեն, կնկարեն, կխոսեն տեղեկությանը հավատալ-չհավատալու մասին, կքննարկեն մեդիա գործիքների դերն ու ազդեցությունը, կկիրառեն դրանք՝ ըստ անհրաժեշտության:

Մեդիակրթության հարուստ ավանդույթ և հաջող փորձ ունեցող երկրներում անգամ նախադպրոցական չափորոշիչներում ու ծրագրերում տեխնոլոգիայի կիրառության մասին զգուշորեն է խոսվում, միշտ շեշտելով դրա նպատակային ու թիրախային լինելը, նաև մեծահասակի դերն ու վերահսկողությունը:

Հայաստանում նախադպրոցական գործող չափորոշիչը չի ձևակերպում մեդիա կամ թվային գրագիտության անհրաժեշտությունն ու դրան հասնելու քայլերը, սակայն, ըստ էության, տարբեր բաղադրիչներով նպաստում է կարողությունների ձևավորմանը, որոնք կարող են դառնալ երեխաների մեդիագրագիտության հիմքը: Տեխնոլոգիա բաժնում խոսվում է մեդիագործիքների ու տեխնոլոգիայի մասին պարզ պատկերացում ունենալու մասին, տարբեր տեղերում խոսվում է քննադատական մտքի զարգացման, հարցեր տալու, պատմությունը հասկանալու, հաղորդակցական հմտությունները բարելավելու և ստեղծագործելու մասին: Մեծ է, սակայն, խզումը չափորոշիչի և գործող կրթական ծրագրերի միջև. չափորոշում նախանշված հմտություններն արտացոլող ժամանակակից կրթական ծրագրից բացի կա մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցների, ձեռնարկների կարիք:

2021թ. մարտի 10-ին հանրային քննարկման դրված չափորոշում առանձնացված է Մեդիա և թվային կարողունակությունը. այն բավական խիստ պահանջներ է սահմանում՝ ակնկալելով, որ նախադպրոցական տարիքի երեխան «պատկերացնում է մեդիայի դերը հասարակական կյանքում, կողմնորոշվում մեդիայի բազմազանության մեջ, ընտրում և գնահատում անհրաժեշտ տեղեկատվությունը...», տիրապետում է մեդիագրագիտության հիմնական կանոններին..., կարողանում է օգտվել տարրական մեդիա գործիքներից»:



Նախագծում ներառված այլ կարողունակություններ, օրինակ՝ մշակութային, հաղորդակցական, ճանաչողական, սերտորեն կապված են մեդիագրագիտության հետ և այդ կապերն ընդգծելը նույնպես կարևոր է:

Մեդիագրագիտության արդյունավետ ինտեգրման համար անհրաժեշտ է բարենպաստ միջավայր՝ տեխնոլոգիաների լայն կիրառություն հասարակության մեջ, հանրության, մասնավորապես ծնողների և դաստիարակների մեդիագրագիտության, քննադատական մտածողության համեմատաբար բարձր մակարդակ, պետության կողմից թեմայի կարևորում, երեխաների տարիքին ու զարգացմանը համապատասխան ուսումնական նյութերի առկայություն՝ մեդիա գործիքներ, հեքիաթներ, տեսանյութեր, խաղեր:

Ինտեգրման բաղադրիչներից ամենահեշտը և տեսանելին ՆՌԻՀ-երը թվային տեխնիկայով զինելն է, սակայն դա ոչ միայն քիչ է, այլ կարող է նաև հակառակ ազդեցությունն ունենալ, եթե նախապես մշակված չլինեն ծրագրերն ու չպատրաստվեն ուսուցիչները: Ինչպես նաև, պետք է ապահովել երեխաների անվտանգությունն ու իրավունքների պաշտպանությունը՝ տեխնոլոգիաների կիրառման համատեքստում:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու վերաբերյալ ուղեցույցում ուղիղ պարտավորություն է դրվում պետությունների վրա, «որով նրանք պետք է նաև աջակցեն ու նպաստեն ծնողների ու խնամակալների թվային գրագիտությանը պետության կողմից հաստատված ծնողներին հասանելի մեխանիզմների միջոցով՝ որպես երեխաների ու ընտանիքների համար առավել ապահով ու կայուն թվային տեխնոլոգիաների միջավայր ստեղծելու միջոց» (ԵԽ, 2018, էջ 19):

Հայաստանում մանկավարժները՝ թե դպրոցական, թե առավել ևս նախադպրոցական ոլորտում, չունեն բավարար գիտելիք ու պատկերացում մեդիագրագիտության վերաբերյալ, բացակայում են կրթական նյութերը, ուղեցույցները, ՆՌԻՀ մանկավարժների համար մեդիագրագիտության կամ մեդիակրթության համակարգային վերապատրաստումներ երբևէ չեն եղել:

Մեդիագրագիտության վերապատրաստման կարիք ունեն նաև ծնողները, որոնց դերը վաղ տարիքում երեխայի զարգացման մեջ առաջնային է: Ծնողն է կարգավորում երեխայի մեդիա սպառումը, ծնողն է երեխայի համար հիմնական օրինակը՝ իր անձնական վարքագծով: Նրանց նույնպես օգնություն է պետք՝ հասկանալու թվային մեդիայի վտանգներն ու դրական կիրառության կանոնները: Մանկավարժների, ծնողների, խնամակալների լրացուցիչ կրթության և ռեսուրսների անհրաժեշտության մասին խոսվում է նաև միջազգային տարբեր հետազոտություններում (Herdzina, Lauricella, 2020):

Մեդիագրագիտության տարածումը սովորաբար ենթադրում է տարբեր ոլորտների համատեղ աշխատանք՝ ծնողին, դպրոցին ու մանկապարտեզին զուգահեռ դրանով կարող են զբաղվել մեդիաները, մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցները, դրանք կարգավորող մարմինը և ոլորտի հասարակական կազմակերպությունները, գրադարաններն ու թանգարանները, երեխաների իրավունքներով ու կրթությամբ զբաղվող այլ կառույցներ:

Այս բոլորի հիմքում պետք է լինի պետական մոտեցում, մեդիագրագիտության զարգացման ազգային հայեցակարգ, որն իր հերթին պիտի հիմնվի խորքային վերլուծությունների վրա՝ թարմ և համապարփակ տվյալներ հայաստանցի երեխաների մեդիասպառման, ծնողների պատկերացումների, նախադպրոցական հաստատությունների տեխնիկական զինվածության, մանկավարժական ավանդույթների, դասավանդողների գիտելիքի ու հմտությունների վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք քայլերը, որ առաջարկում ենք ձեռնարկել նախադպրոցական երեխաների մեդիագրագիտությունը բարելավելու համար:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՂՆԵՐԻՆ

- Անցկացնել խորքային հետազոտություններ Հայաստանում երեխաների մեղիա սպառման միտումներն ու խնդիրները, մանկավարժների և ծնողների կարողություններն ու կարիքները գնահատելու համար:
- Հետազոտության, տեղական և միջազգային փորձի հիման վրա մշակել մեղիակրթության ազգային հայեցակարգ՝ կրթության բոլոր մակարդակների համար:
- Մեղիան դիտարկել լայն, ոչ միայն թվային իմաստով, և վաղ տարիքում մեղիագրագիտության հիմքը դնելիս շեշտել երեխայի մտածողության ու հաղորդակցության կարողությունների զարգացումը, տարբեր ուղերձների ընկալումն ու ստեղծումը՝ գրավոր, բանավոր, պատկերային, նաև՝ թվային միջոցներով, թվային տեխնոլոգիայի դերի ու կիրառության վերաբերյալ պարզ պատկերացման ձևավորումը:
- Այս մոտեցմամբ՝ վերանայել նախադպրոցական պետական չափորոշչի նախագծում Մեղիա և թվային կարողունակությունը՝ տարիքին համապատասխան անկնալիքներով և պահանջներով, շեշտելով մեծահասակի մասնակցությունն ու վերահսկողությունը, և տեխնոլոգիայի կիրառության նպատակային լինելը երեխայի կրթության մեջ: Մատնանշել այս և մյուս կարողունակությունների (հաղորդակցական, ճանաչողական, սոցիալական, մշակութային, ժողովրդավարական, առողջ ապրելակերպի) կապը:
- Վերանայել նախադպրոցական տարիքային խմբերի ուսումնական ծրագրերը, համապատասխանեցնել չափորոշչի պահանջներին (ինչն այսօր գործող ծրագրերով մեծ մասով ապահովված չէ)՝ այս գործընթացում ներգրավելով ոլորտի մասնագետներին:
- Առաջնահերթություն տալ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացմամբ զբաղվող մեծահասակների՝ ծնողների և դաստիարակների մեղիակրթությանը, քանի որ նրանք են երեխայի համար օրինակը և առաջնորդողը մեղիա տիրույթում: Խթանել նաև ՆՈՒՀ-ծնող կապը մեղիակրթության համատեքստում:
- Խրախուսել մանկավարժական բուհերում մեղիակրթությունը և թեմայի հետազոտությունը:
- Մշակել նախադպրոցական կրթության մեջ մեղիագրագիտության ինտեգրման ուղեցույց՝ մեղիայի կիրառությունից մինչև մեղիա ուղերձները հասկանալու հմտությունների ձևավորմանն ուղղված:
- Մշակել թվային անվտանգության ուղեցույց ՆՈՒՀ-երի համար՝ երեխաների անձնական տվյալները պաշտպանելու համար:
- Խթանել որակյալ հայալեզու մանկական ժամանցային և կրթական մեղիա բովանդակության ստեղծումն ու տարածումը, այդ թվում՝ մեղիայի ու թվային աշխարհի վերաբերյալ (խաղեր, մուլտեր, ֆիլմեր, հաղորդումներ):
- Անել հնարավորինք՝ պետական ՆՈՒՀ-երը ապահովելու ամենաառաջնային թվային մեղիա գործիքներով (համակարգիչ, պրոեկտոր, էկրաններ և այլն), որոնք թույլ կտան վերապատրաստում անցած դասավանդողներին դրանք տեղին ու թիրախային կիրառել երեխաների հետ աշխատանքում:
- Բոլոր գործողություններում ակտիվորեն համագործակցել ոլորտի փորձառու կազմակերպությունների և մասնագետների հետ: Ներգրավել նաև երեխաների իրավունքներով զբաղվող կառույցներին, լրատվամիջոցներին, գրադարաններին ու թանգարաններին:



ՀՈՒՇՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ

Մեդիագրագիտությունը շատ ավելի լայն է, քան տեխնոլոգիաների կիրառությունը: Երեխաներին խրախուսեք քննել ինֆորմացիայի աղբյուրը և նպատակը (ո՞վ ասաց, ինչու՞ ասաց), հարցեր տալ պատմությունների, իրավիճակների, թեմաների մասին, օգնել ստեղծել պատմություններ՝ բանավոր կամ վիզուալ, պատմել պատմություններ տարբեր դերերից, տարբեր նպատակներով, տրամադրություններով... Մեդիա են նաև գիրքը, թերթը, ձայնասկավառակը, թատրոնը՝ դրանց միջոցով ու դրանց մասին խաղերն ու քննարկումները ևս մեդիակրթության մաս են:

Վաղ տարիքում երեխան սովորում է հեքիաթներով, իսկ հեքիաթներում գրեթե միշտ տեղեկություն փոխանցողներ, կան սուտ խոսող կերպարներ, հերոսներ, որ չար նպատակով ինչ-որ բան են համոզում, ճշմարտությունը բացահայտողներ: Այս հեքիաթները կարող են հիմք դառնալ երեխայի համար՝ հետագայում կեղծ տեղեկությունների հանդիպելիս ճիշտ կողմնորոշվելու, գրագետ մեդիասպառող լինելու համար:

Երեխաները շատ հաճախ վաղ տարիքից թվային մեդիա սպառող են: Պարզ գրույցները նրանց սիրելի մուլտի, խաղի ու երգերի մասին կօգնեն հասկանալ նախասիրությունները, խթանել, որ երեխաներն իրենք հարցեր տան սարքերի ու բովանդակության մասին, տարբերեն, օրինակ, գովազդն ու դրա նպատակը, հասկանան, որ ինչպես փողոցում չի կարելի անձանոթի հետ գրուցել, այնպես էլ օտար մարդկանց զանգերին կամ գրառումներին չի կարելի պատասխանել առանց ծնողի իմացության:

Տեխնոլոգիան նախադպրոցական կրթության մեջ կիրառելը պիտի լինի դրվագային, նպատակային, ուղղված երեխայի զարգացման այս կամ այն նպատակին: Տեխնոլոգիան միայն էկրանը չէ՝ ձայնագրիչ կամ լուսանկարչական սարք օգտագործելը, պռոնկտորով սենյակում յուրահատուկ միջավայր ստեղծելը, տեսազանգ անելը կարող են դառնալ ընթացիկ խաղերի ու պարապմունքների բաղադրիչը այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է: Տեխնոլոգիայի կիրառությունը պիտի լինի մեծահասակի կողմից/մասնակցությամբ:

Տեխնոլոգիան մանկապարտեզ բերելով երեխային կարևոր է սովորեցնել դրանից օգտվելու պարզ կանոնները՝ սարքը (պլանշետը, լուսանկարչական սարքը, խաղը, երգը) միացնում ենք ինչ-որ կոնկրետ գործողության համար և պիտի կարողանանք նաև այն անջատել:

Չափազանց կարևոր է այս հարցում սերտ աշխատանքը ծնողների հետ երեխաների մեդիա սպառումը կարող է դառնալ ծնողական ժողովների թեմա, քննարկելու, թե ինչպես են ծնողները կարգավորում այն, հուշելու նրանց թվային գործիքների վտանգներն ու վսասները և խորհուրդներ տալու: Կարելի է ծնողներին ներգրավել ընթացիկ միջոցառումների ու աշխատանքների մեջ՝ օրինակ, երբ մանկապարտեզում կարդացել/բեմադրել էք հեքիաթը, առաջարկեք ծնողին տանը երեխայի հետ միասին նայել դրա մուլտը ու հարցերի միջոցով խթանել, որ երեխան մտածի տարբերությունների ու նմանությունների մասին, կամ ծնողներին էլ խնդրել երեխաների հետ անել փոքրիկ լուսանկարչական նախագիծ՝ իրենց տանը կամ բակում՝ երեխայի հետ քննարկելով, թե ինչպես է լուսանկարը ֆիքսում իրականության փոքր պատարիկը (սենյակի մի հատվածը, ամբողջի դետալը, մեծացնում կամ փոքրացնում իրերը...)

• Երեխաների մասին տեղեկությունները, նրանց լուսանկարներն ու տվյալները մի տարածք համացանցում՝ առանց ծնողի համաձայնության: Եվ անգամ ծնողների համաձայնության դեպքում՝ զգուշավոր եղեք ու առաջնորդվեք երեխայի լավագույն շահով: Հետևեք ԵՄ «Թվային միջավայրում երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար» ուղեցույցի խորհուրդներին:

• Օգտվե՛ք մեդիագրագիտության առկա ռեսուրսներից՝ ինքնակրթվելու և երեխաների հետ աշխատանքում այդ հմտությունները կիրառելու համար: Հանրային լրագրության ակումբի ֆեյսբուքյան էջում հասանելի են ամերիկացի մասնագետ Շերի Քուլվերի վեբինարները՝ դաստիարակների համար: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի Մեդիագրագիտություն բաժնում կան ձեռնարկներ, տեսադասեր և խաղեր մանկավարժների համար:

• Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի ստեղծած innostud.am կայքում կան ռուսերեն և անգլերեն նյութեր, նաև թվային խաղեր, որոնք նույնպես կարող են օգտակար լինել մեդիակրթության գործընթացում:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐՎԱԾ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿ

- Հայաստանի Հանրապետության օրենքը Նախադպրոցական Կրթության մասին- <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21490>
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, shorturl.at/gwLY0
- Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
- Հայաստանի Հանրապետության օրենքը Հանրակրթության մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71908>
- Հայաստանի Հանրապետության օրենքը տեղական ինքնակառավարման մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271>
- Հայաստանի Հանրապետության օրենքը երեխայի իրավունքների մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115>
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=51750>
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանը Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին 2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=67889>
- Հանրային լրագրության ակումբ, առցանց վերապատրաստումներ ՆՈՒՀ մանկավարժների համար, <https://www.facebook.com/198528190172086/videos/1032755833879525>, <https://pjc.am/mediagragitutyam-ev-qnnadatakan-mtatsoghutyam-karevorutyune/>
- ՀՀ կրթության եվ գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր, ծրագիր, Երևան, 2011
- ՀՀ կրթության եվ գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան, 2007
- «Ամսիկների դերն ու նշանակությունը 5-6 տարեկանների «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրում», <https://dpir.mskh.am/hy/node/1823>
- Ամփոփիչ մշտադիտարկում ՀՊՄՀ-ում, 2019, <http://www.cfep.am/hy/news/item/2019/11/22/ASPU/>
- ԵԽ, 2018, Ուղեցույց Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար https://ombuds.am/images/files/d376004de9c5ffba74cc79372b5a780b.pdf?fbclid=IwAR3dAH9offZVouW-vh-7iTsKlIeCtj_1BUOjRScX-jrS1XwQGcitiSo-rw
- Թերզյան Գ, «Խոսք և հաղորդակցություն», մեթոդական ձեռնարկներ և աշխատանքային տետրեր տարրական դասարանների համար Ինտերնյուս, 2013, «Մեդիագրագիտություն» ձեռնարկ, <https://media.am/hy/lab/2020/04/16/17917/>
- Կրթական ծրագրերի կենտրոն, 2019, Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատման և դրա վրա ազդող

գործոնների հետազոտություն, չորրորդ միջանկյալ հաշվետվություն, Երևան, <http://www.cfep.am/files/legislation/628.pdf>

- Կուդինով Է , 2016, Գոյատեվել թվային աշխարհում, Կասպերսկի լաբորատորիա, <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/10/Survive-in-the-digital-world-ARM.pdf>
- Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի միջանկյալ արդյունքների հետազոտություն, Երևան 2018, <http://policyobserver.am/wp-content/uploads/Education.pdf>
- Մարության, 2008, Նախադպրոցական մանկավարժություն, Դավլաբյան, <https://innostud.am/application/library/3de96771.pdf>
- Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Մեդիագրագիտության կրթական ռեսուրսներ , <https://media.am/hy/category/medialiteracy/>
- Մխիրթար Սեբաստացի կրթահամալիր, Դպրոց պարտեզի նախակրթարանի ծրագիր, <https://dpir.mskh.am/hy/node/860>
- Մխիրթար Սեբաստացի կրթահամալիրի նախակրթարանի մեթոդական նյութեր, <https://dpir.mskh.am/hy/node/1205>
- ՅՈՒՆԻՍԵՖ, 2017, 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով, Դաստիարակի ուղեցույց <https://www.unicef.org/armenia/media/2516/file>
- ՅՈՒՆԻՍԵՖ, 2018, Ծննդից մինչև վեց Տարեկան երեխաների Զարգացման և կրթական չափորոշիչներ, shorturl.at/kyEGM
- ՅՈՒՆԻՍԵՖ, 2021, Ինչպես ապահովել երեխայի անվտանգությունն առցանց տիրույթում, shorturl.at/jDTW5
- Սարա Սալումա, Լաուրի Պալսա, 2021, Մեդիագրագիտության հիմքը կառուցվում է վաղ մանկությունից. Ուսումնասիրում ենք ֆիննական մեդիա կրթության առանձնահատկություններն ու լավագույն փորձը, վեբինար, Հանրային լրագրության ակումբ, <https://www.facebook.com/198528190172086/videos/3403375416446529>
- Վերապատրաստումներ մուլտիմեդիոն լաբորատորիայում, <https://aspu.am/hy/content/sdgsdgdgfg/#sthash.lad9Nkf5.dpbs>
- Базовий Компонент Дошкільної Освіти, 2020, https://mon.gov.ua/storage/app/media/gromadske-obgovorennya/2020/11/10/proekt-bazovyy-komponent-doshkilnoyi-osvity_1.pdf
- Chaudron S., Di Gioia R., Gemo M.; 2018, Young children (0-8) and digital technology, a qualitative study across, European Union
- CoE, 2020, “All on board – all online”: Handbook for Policy Makers on The Rights of the Children in the Digital Environment, <https://rm.coe.int/publication-it-handbook-for-policy-makers-final-eng/1680a069f8>
- Curriculum for the Preschool, 2019 <https://www.skolverket.se/getFile?file=4049>, Sweden
- Danish Ministry of Children and Education, 2020, The Strengthened Pedagogical Curriculum, https://emu.dk/sites/default/files/2020-01/Den%20styrkede%20p%C3%A6dagogiske%20l%C3%A6replan_engelsk.pdf
- Dafna Lemish, 2015, Children and Media as a Discipline in The International Encyclopedia of Media Literacy, Wiley Blackwell
- Digital citizenship education handbook, Council of Europe, 2019



<https://rm.coe.int/digital-citizenship-education-handbook/168093586f>

[Digital Literacy for Children: Exploring definitions and frameworks \(Scoping Paper No. 01\), United Nations Children's Fund \(UNICEF\), New York, \(2019\)](#)

[Digital Literacy in the Early Years: Practices in Formal Settings, Teacher Education, and the Role of Informal Learning Spaces A Review of the Literature](#)

[Digital Literacy Fundamentals, MediaSmarts, <https://mediasmarts.ca/digital-media-literacy/general-information/digital-media-literacy-fundamentals/digital-literacy-fundamentals>](#)

[Directive \(EU\) 2018/1808 of the European Parliament and of the Council of 14 November 2018 amending Directive 2010/13/EU on the coordination of certain provisions laid down by law, regulation or administrative action in Member States concerning the provision of audiovisual media services \(Audiovisual Media Services Directive\) in view of changing market realities, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2018/1808/oj>](#)

[EC, 2019, Key Data on Early Childhood Education and Care in Europe 2019 , Eurydice report, \[https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/content/key-data-early-childhood-education-and-care-europe-%E2%80%93-2019-edition_en\]\(https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/content/key-data-early-childhood-education-and-care-europe-%E2%80%93-2019-edition_en\)](#)

[Education Endowment Fund, 2019 Digital Technology, UK, <https://educationendowmentfoundation.org.uk/evidence-summaries/early-years-toolkit/digital-technology/>](#)

[European Audiovisual Observatory, 2016, Mapping of media literacy practices and actions in EU-28, <https://rm.coe.int/1680783500>](#)

- EU, 2019, COST Action IS1410 Digital Literacy in the Early Years: Practices in Formal Settings, Teacher Education and Informal Learning Spaces: Policy Brief , <http://digilitey.eu/wp-content/uploads/2020/07/WG2policy.pdf>
- Finnish National core curriculum for early childhood education and care 2018, https://www.oph.fi/sites/default/files/documents/varhaiskasvatussuunnitelman_perusteet_2018.pdf

[Finnish Ministry of Education and Culture, 2019, Media Literacy in Finland: national media education policy <https://medialukutaitosuomessa.fi/mediaeducationpolicy.pdf>](#)

[“Guidelines to Respect, Protect and Fulfil the Rights of the Child in the Digital Environment” and the “Strategy for the Rights of the Child” \(2016-2021\)](#)

[Fred Roger Center, 2015, Carrying fred rogers' message forward in the digital age <https://www.fredrogerscenter.org/wp-content/uploads/2015/07/Carrying-Fred-Rogers-Message-Forward-in-the-Digital-Age-1.pdf>](#)

[Herdzina, J. & Lauricella, A. R. \(2020\). Media Literacy in Early Childhood Report. Chicago, IL. Technology in Early Childhood \(TEC\) Center, Erikson Institute.](#)

[Ilene R. Berson et al, 2014, People, Places, and Pandas: Engaging Preschoolers with Interactive Whiteboards, Social Studies and the Young Learner 26 \(4\), pp. 18–22 National Council for the Social Studies](#)

<https://www.socialstudies.org/social-studies-and-young-learner/26/4/people-places-and-pandas-engaging-preschoolers-interactive>

[International forum for Steiner/Waldorf Education, 2019, “A charter for education in the digital world”, <https://www.waldorf-international.org/en/media-education/a-charter/>](#)

[Lessenki M., 2019, Just think about it: Findings of the Media Literacy Index 2019, Open Society Institute, Sofia](#)

[Livingstone S. et al, 2020, Media and Information Literacy among Children on Three Continents: Insights into the Measurement and Mediation of Well-being, LSE, UK, \[http://eprints.lse.ac.uk/107508/1/Livingstone media and information literacy among children accepted.pdf\]\(http://eprints.lse.ac.uk/107508/1/Livingstone%20media%20and%20information%20literacy%20among%20children%20accepted.pdf\)](#)

[National Curriculum for Pre-school Child Care Institutions Regulation of the Government of the Republic of Estonia, No. 87 of 29 May 2008, \[https://www.hm.ee/sites/default/files/estonian_national_curriculum_for_preschool_child_care_institutions.pdf\]\(https://www.hm.ee/sites/default/files/estonian_national_curriculum_for_preschool_child_care_institutions.pdf\)](#)

- Marklund L, 2018, “Swedish preschool teachers' perceptions about digital play in a workplace-learning context”, in International Research Journal “Early Years”, <https://www.tandfonline.com/doi/ref/10.1080/09575146.2019.1658065?scroll=top>

[“Media and Young Minds”, COUNCIL ON COMMUNICATIONS AND MEDIA, Pediatrics November 2016, 138 \(5\) e20162591; DOI: <https://pediatrics.aappublications.org/content/138/5/e20162591>](#)

[Media Literacy in Early Childhood Education: Inquiry-based Technology Integration Faith Rogow: in Tech in Early Year, Erikson Institute, 2015](#)

- NAMLE, 2021, Media literacy defined, <https://namle.net/resources/media-literacy-defined/>
- National Literacy Trust, 2017 Digital Technology and the Early Years, UK, <https://literacytrust.org.uk/resources/digital-technology-and-early-years/>

[Nielsen, 2020, “Day care uses digital media with care”, Aarhus University, <https://dpu.au.dk/aktuelt/nyhed/artikel/dagtilbud-bruger-digitale-medier-med-omtanke/?cHash=0856e9257bff4231cdb0c34c9ee9964c&fbclid=IwAR0qtxItqHv14OA9YYGnWL5pnz6Hu2qsO9fdMkwUB9inT0vKnCRqyKTONus>](#)

- Nielsen, 2020, Media Literacy and Preschool Children Interview, <https://youtu.be/tOCPc8jDo5s>



- NordMedia Network, 2020, Associate Professor Stine Liv Johansen in a webinar about "Early Years Education and Digital Media", <https://www.youtube.com/watch?v=ddYcm1Q3t9E>
- Pila, S., Blackwell, C. K., Lauricella, A. R., & Wartella, E. (2019). Technology in the lives of educators and early childhood programs: 2018 Survey. Evanston, IL: Center on Media and Human Development, Northwestern University
- Polizzi G., 2020, Digital literacy and the national curriculum for England: Learning from how the experts engage with and evaluate online content, in Computers and Education journal, shorturl.at/klqCZ
- Richardson J., Samara V., 2020, Digital Citizenship Education Survey, CoE, shorturl.at/swNW8
- Rideout, V., & Robb, M. B. (2020). The Common Sense census: Media use by kids age zero to eight, 2020. San Francisco, CA: Common Sense Media.
- Rogow F , 2002, ABC's of Media Literacy: "What Can Pre-Schoolers Learn?", <https://www.medialit.org/reading-room/abcs-media-literacy-what-can-pre-schoolers-learn>
- [Shining Mountain, 2015, "Waldorf Education and the Use of Technology by Vicki Larson"](https://shiningmountainwaldorf.org/articles/waldorf-education-and-the-use-of-technology/)
- [Stavroula Kontovourki, Emmanouel Garoufallou, Lena Ivarsson, Michael Klein, Riitta-Liisa Korkeamaki, Damiana Koutsomiha, Gudrun Marci-Boehncke, Eufimia Tafa, and Sirje Virkus http://digilitey.eu](http://digilitey.eu)
- [Stine Liv Johansen \(28.09.2020\), Public Debates and Parenting Paradoxes: Studying Digital Technologies in Early Years Education, https://nordmedianetwork.org/latest/news/public-debates-and-parenting-paradoxes-digital-technologies-in-early-years-education/](https://nordmedianetwork.org/latest/news/public-debates-and-parenting-paradoxes-digital-technologies-in-early-years-education/)
- Swedish education Radio, UR- <https://urplay.se/bladdra/utbildning-och-media>
- UNESCO, 2018, Global framework of digital literacy skills, <http://uis.unesco.org/sites/default/files/documents/ip51-global-framework-reference-digital-literacy-skills-2018-en.pdf>
- UNESCO, 2011, Media and Information literacy: curriculum for teacher, shorturl.at/euxP9
- UK Department of Education, 2017, "Statutory framework for the early years foundation stage: Setting the standards for learning, development and care for children from birth to five", https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/596629/EYFS_STATUTORY_FRAMEWORK_2017.pdf
- [Vuorikari, R., Punie, Y., Carretero Gomez S., Van den Brande, G. \(2016\). DigComp 2.0: The Digital Competence Framework for Citizens. Update Phase 1: The Conceptual Reference Model. Luxembourg Publication Office of the European Union. https://rb.gy/nsumj8](https://rb.gy/nsumj8)
- WHO, 2019, Guidelines on physical activity, sedentary behavior and sleep for children under 5 years of age, <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/325147/WHO-NMH-PND-2019.4-eng.pdf?sequence=1&isAllowed=y>
- Yankovich O. et al, 2019, Technology of forming media literacy of children of the senior

preschool age of Ukraine http://ceur-ws.org/Vol-2433/paper07.pdf?fbclid=IwAR3tdvBt-RMZ062q1nikQ0P9r2c_YqwM5AB1hMPwVptH_5p_3_lGtpi7OHs

[Комарова И., 2020, Онлайн-интервью с руководителем секции “Медиаобразование в дошкольном возрасте” Ирины Комаровой,](#)

<https://www.youtube.com/watch?v=2n5jhODTIN4>

- Հարցազրույցների և քննարկումների մասնակից փորձագետներ
- Անահիտ Հարությունյան, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
- Անուշ Ալեքսանյան, հոգեբան
- Աշխեն Գյուրջյան, «Քայլ առ քայլ» հիմնադրամ, վերապատրաստումների առաջատար մասնագետ
- Արա Աթայան, Արեգնազան կրթահամալիրի ուսուցիչ և Վալդորֆյան մանկավարժության փորձագետ
- Արաքյա Թորոսյան, դաստիարակ, Այնթապի մանկապարտեզ
- Արթուր Պապյան, թվային անվտանգության փորձագետ
- Աննա Վելիցյան, Ծնողի դպրոցի հիմնադիր
- Գայանե Թերզյան, մանկավարժության մասնագետ, Մխիթար սեբաստացի կրթահամալիր
- Ելենա Կուցենկո, մեդիա մանկավարժ, Ղրիմ
- Թեհմինե Կարախանյան, ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
- Իվետա Շահբազյան, ՄԻՊ աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
- Լիանա Վերդյան, «Հրաշք Տնակ» մանկապարտեզի փոխտնօրեն
- Լուսինե Պողոսյան, Պետական մանկավարժական համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ
- Հասմիկ Խաչատրյան, «Խորամանկապարտեզ»-ի տնօրեն
- Հեղինե Խաչատրյան, Պետական մանկավարժական համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան
- Հերմինե Ստեփանյան, Շոդակաթ հեռուստաընկերության մանկական հաղորդումների դեկավար
- Մայա Սիմոնյան, ՅՈՒՆԻՍԵֆ-ի Վաղ մանկության զարգացման ծրագրերի համակարգող
- Մարիտ Յակոբյան, Գոտեբուրգի համալսարանի հետազոտող, Շվեդիա
- Յորան Անդերսոն, մեդիագրագիտության մանկավարժ, խորհրդատու, Շվեդիա
- Շերի Քուլվեր, Թեմֆիլի համալսարանի դասախոս, Մեդիագրագիտության կենտրոնի դեկավար
- Պալա Լաուրի, Ֆինլանդիայի աուդիովիզուալ ինստիտուտ
- Սիլվա Սարգսյան, Ռեջիո մանկավարժ
- Վարսի Մենեքերիմյան, մանկական հոգեբան
- Փառանձեմ Խանգելոյան, Նոյեմբերյանի N 2 մանկապարտեզի մասնագետ
- Փառանձեմ Շահմուրադյան, Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ
- Օկսանա Վոլոշենյուկ, Ուկրաինայի մամուլի ակադեմիա



Ներածութիւն.....3

Մեթոդաբանութիւն..... 6

ԹՎԱՅԻՆ, ԹԵ՞ՍԵԴԻԱԳԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....7

ԹՎԱՅԻՆ ՄԵԴԻԱՆ ՎԱՂ ՏԱՐԻՔՈՒՄ.....10

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍ.
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....12

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ.
ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 24

ՆՈՒՀ-ԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԻՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ,
ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....30

ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՒՀ
ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....35

ԵՐԵԽԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ.....37

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....38

ԱՍՓՈՓԻՉ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....41

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՄՇԱԿՈՂՆԵՐԻՆ.....43

ՀՈՒՇՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ.....44

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....46

Հետազոտությունն իրականացվել է Հանրային լրագրության ակումբի
«Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական
հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ
միջամտություն» ծրագրի շրջանակներում:
Հետազոտությունը տարածելիս Հանրային լրագրության ակումբին հղում
կատարելը պարտադիր է:

ՀԼԱ կոնտակտային տվյալներ՝
Կայք՝ <https://pjc.am/>
Էլ հասցե՝ info@pjc.am
Հեռ ՝ +37412 755898, +37499 755 898

